AZG NEW PDF.qxd 11/06/2010 20:29 Page 1

Ազգ
Azg
12 ՅՈՒՆԻՍ 2010 ՇԱԲԱԹ 108 (4488)
ISSN: 1829-1651

# Ռուսաստանի եւ Ֆրանսիայի վարչապետները քննարկել են նաեւ ԼՂ հարցը

Ռուսական «Նովոստի» գործակալության փոխանցմամբ՝ Ֆրանսիայում երկօրյա այցով գտնվող ՌԴ վարչապետ Վլադիմիր Պուտինը, հանդիպելով Ֆրանսիայի իր գործընկերոջը՝ Ֆրանսուա Ֆիյոնին, ի թիվս այլ հարցերի՝ ռուս-վրացական հարաբերությունների, Իրանի դեմ նոր պատժամիջոցների, քննարկել է նաեւ Ղարաբաղի հարցը: Այս մասին հանդիպումից հետո հայտարարել է Ֆրանսիայի վարչապետը: Պուտինը Ֆրանսիայում կհանդիպի նաեւ նախագահ Նիկոլա Սարկոզիին:

# Թուրքիա-Իսրայել լարվածությունը գուցե հանգեցնի Հայոց ցեղասպանության ճանաչմանը

*Սակայն ցեղասպանությունը մարդկության դեմ կատարված հանցագործություն է, ուստի ճանաչումը չպետք է վերագրվի ճանաչող պետության արժանիքներին*

ՀԱԿՈԲ ՉԱՔՐՅԱՆ

Մայիսի 31-ին «Ազատության նավատորմիղի» վրա իսրայելական հատուկ ջոկատի հարձակումով, որին թուրքական «Մավի Մարմարա» նավի տախտակամածում համառ դիմադրություն էին ցուցաբերել կացիններով, դանակներով եւ երկաթե ձողերով զինված Գազա մարդասիրական օգնություն տանող ուղեւորները, Թուրքիա-Իսրայել տարաձայնությունները վերաճեցին սուր հակասությունների:

Դա Իսրայելում Հայոց ցեղասպանության հնարավոր ճանաչման հետեւություններ անելու առիթ տվեց հայաստանյան որոշ քաղաքական գործիչներին, քաղաքագետներին եւ վերլուծաբաններին: Մինչդեռ Թուրքիայի հետ հակասությունների պատճառով ճանաչելու դեպքում Իսրայելն ընդամենը պիտի շահարկի Հայոց ցեղասպանությունը, իսկ ճանաչման հարցն օրակարգ մտցնելու պարագայում՝ կշահարկի: Այն առումով, որ Հայոց ցեղասպանությունը նրա ձեռքին կդառնա Թուրքիայի վրա ազդելու հավելյալ լծակ: Քանի որ ճանաչումը ենթադրում է ինքնակամ վայր դնել այդ լծակը, ուստի ավելի իրատեսական պետք է համարել Իսրայելում Հայոց ցեղասպանության ոչ թե ճանաչումը, այլ շահարկումը:

Ըստ երեւույթին, շահարկումներն արդեն սկսվել են: Դրանում համոզվելու համար կարելի է անդրադառնալ ամերիկյան «Նյու Յորքեր» պարբերականի հեղինակ, գրական «Պուլիցեր» մրցանակի դափնեկիր եւ հանրահայտ լրագրող Սեյմուր Հերշի՝ թուրք իսլամականների խոսափող «Թաքվիմ» թերթին տված հարցազրույցին, ինչպես նաեւ Նազեհան Ալչը ստորագրությամբ Աքշամի հունիսի 10-ի համարում հրապարակված հոդվածին:

Սեյմուր Հերշի հարցազրույցի մասին մեզ տեղեկացնում է Նյու Յորքի «Թուրքական» կայքէջը, ըստ որի՝ հարցազրույցում ամերիկյան լրագրողն ասել է. «Թուրք-իսրայելական հարաբերությունների լարվածության հետագա սրումը Հայաստանի օգտին է, որովհետեւ ԱՄՆ-ի հրեական կառույցները, եթե նույնիսկ չճանաչեն, աջակցելու են 1915-ի իրադարձություններին առնչվող հայկական բանաձեւին: Անգամ սկսել են համատեղ (հայերի հետ) աշխատանքները որոշ հարցերում: Հայաստանը նույնպես դեմ է Թուրքիայի զարգացմանը»:

Տես էջ 5

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆ

# «Ինձ համար մեծ պատիվ է անցանկալի անձ ճանաչվել Ադրբեջանում»




Այս արտահայտությունը Ֆրանսիայի խորհրդարանի պատգամավոր **Ֆրանսուա Ռոշբլուայինն** է, որի գլխավորությամբ Ֆրանսիայի խորհրդարանի պատվիրակությունը այցելեց ԼՂՀ, իսկ երեկ հանդիպումներ ունեցավ ՀՀ նախագահի եւ արտգործնախարարի հետ: «Դա մեզ համար նորություն չէ. մենք անցյալ տարի էլ էինք հայտնվել Ադրբեջանի «սեւ ցուցակում: Նշեմ նաեւ, որ ինձ համար մեծ պատիվ է անցանկալի անձ ճանաչվել Ադրբեջանում», այսպես է մեկնաբանել ֆրանսիացի պատգամավորը Բաքվի արձագանքը: Առհասարակ Ռոշբլուան նշել է, որ ինքն ու իր գործընկերները ուրախությամբ են կրկին այցելել Արցախ. «Վերջին ընտրություններն անցել են բարձր մակարդակով, եւ այդ ընտրությունների արդյունքները չեն կարող դառնալ խնդրո առարկա: Ես պարզապես կուզենայի մաղթել հարեւան որոշ երկրներին՝ նույնկերպ անցկացնել ընտրություններն իրենց երկրներում», շեշտել է Ռոշբլուան:

# Մեծ Ամերիկայի փոքրիկ հայ գեղեցկուհին



Great American fotocontest-ի՝ մինչեւ 6 տարեկան երեխաների համար հայտարարված 2010 թվականի մրցույթում հաղթած երեխաներից մեկը 2 տարեկան Մանե Ազարյանն է: Նրա ծնողները on-line հաղորդագրություն են ստացել, որով կազմակերպությունը հայտնում է այս մասին: Մրցույթի արդյունքների համաձայն Մանեն ընդգրկվել է ԱՄՆ-ի 10 ամենաչքնաղ փոքրահասակ գեղեցկուհիների մեջ: Մանեի լուսանկարը մյուս 10 գեղեցկուհիների նկարների հետ կներկայացվի այս առթիվ հրատարակվելիք ալբոմում:

Կազմակերպության ներկայացուցիչները եղել են Ազարյանների տանը եւ լրացուցիչ լուսանկարներ արել: Ազարյան ծնողները Գլենդեյլ են տեղափոխվել 3 տարի առաջ՝ իբրեւ Green card վիճակախաղի հաղթողներ:

Գ. Գ.

# ՆԱՏՕ-ի շաբաթ Հայաստանում

Հունիսի 14-18-ը Հայաստան-ՆԱՏՕ Անհատական գործընկերության գործողությունների ծրագրի շրջանակում Հայաստանում անցկացվելու է ՆԱՏՕ-ի հերթական շաբաթը, որի ընթացքում նախատեսվում են դաշինքի ներկայացուցիչների այցեր Երեւան, հանդիպումներ եւ մի շարք միջոցառումներ:

ՆԱՏՕ-ի շաբաթը Հայաստանի կողմից այս տարի իրականացվող կարեւոր միջոցառումներից մեկն է, որի նպատակն է Հայաստանի հասարակությանը ներկայացնել Հայաստան-ՆԱՏՕ համագործակցության հիմնական ուղղությունները, դաշինքի գործունեության ժամանակակից նկարագիրը եւ բովանդակությունը:

Միջոցառման շրջանակներում կայանալու է նաեւ Երեւան-Կունդուզ/ISAF հեռուստակամուրջը Աֆղանստանում հայ խաղաղապահ գումարտակի զինծառայողների եւ նրանց ընտանիքների համար:

Հոկտեմբերի 17-ին Գյումրիի Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտում ուսանողների համար կկազմակերպվեն դասախոսություններ, նաեւ կտրամադրվեն գրքեր «ՆԱՏՕ-ի անկյուն» ստեղծելու նպատակով:

Հ. Ա.

# Ռուսաստանի անկախության օրը

**Մինչեւ 2002 թվականը այս տոնի անվանումը շատ փոփոխությունների է ենթարկվել, սակայն մնացել է Ռուսաստանում նշվող պետական տոներից ամենաերիտասարդներից: 1994 թվականի հունիսի 12-ին տոնին պետական նշանակություն է տվել Ռուսաստանի առաջին նախագահ Բորիս Ելցինը՝ այն համարելով պետականության հաստատման օր: Հետագայում այս օրը կոչել են Անկախության օր: Ի դեպ, հենց այս օրն է Ռուսաստանը, բացի անկախության ձեռքբերումից, ընտրել իր առաջին նախագահին: Ամեն դեպքում, ռուսական լրատվամիջոցների հավաստմամբ, այս օրը ժողովրդի մեջ տարբեր ձեւով է ընդունվել: Շատերի համար հունիսի 12-ը պարզապես հերթական հանգստյան օր է համարվել: Սակայն 1998 թվականին իր ելույթում առաջին նախագահ Բ. Ելցինն առաջարկել է հունիսի 12-ը նշել որպես Ռուսաստանի օր: Նոր տոնն իր պաշտոնական անվանումը ստացել է միայն 2002 թվականի փետրվարի 1-ին:**

# ԱՄՆ-ի չի թաքցնում իր հիասթափվածությունը Անկարայից

**Բրյուսելում՝ ՆԱՏՕ-ի պաշտպանության նախարարների նիստի ընթացքում ԱՄՆ պաշտպանության նախարար Ռոբերտ Գեյթսը հայտարարել է, որ ինքը հիասթափված է Թուրքիայից՝ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդում ընդդեմ Իրանի նկատմամբ նոր պատժամիջոցների Անկարայի քվեարկումից: «Չնայած պետք է հայտնեմ մեր հիասթափվածությունը, բայց եւ նշեմ, որ ամերիկաթուրքական ռազմական համագործակցությունը Անկարայի այս քայլից չեն տուժի. դաշնակիցները ոչ բոլոր դեպքերում են համակարծիք լինում», նշել է Գեյթսը՝ շեշտելով, որ Թուրքիան «շարունակում է առանցքային դերակատարում ունենալ ՆԱՏՕ-ում»:**

**Հիշեցնենք, որ Թուրքիան եւ Բրազիլիան դեմ արտահայտվեցին Իրանի նկատմամբ նոր պատժամիջոցներին:**

# Ի՞նչ տվեց պետական ֆինանսավորումը մասնավոր հատվածին

*Առաջին արդյունքներն արդեն նկատելի են*

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Ինչպես ցույց են տալիս այս տարվա առաջին 4 ամիսների վիճակագրական տվյալները, մեր տնտեսության վերականգնումն ավելի արագ է ընթանում, քան սպասվում էր: Իհարկե, դա զուտ հայաստանյան երեւույթ չէ եւ կապված է համաշխարհային տնտեսության ճգնաժամից դուրս գալու դարձյալ սպասվածից ավելի բարձր տեմպերի հետ: Ի դեպ, ճիշտ նույն կերպ մեր տնտեսության անկումն անցյալ տարի կապված էր համաշխարհային տնտեսության անկման հետ: Միեւնույն ժամանակ, ճիշտ չէ ամեն ինչ պայմանավորել միայն համաշխարհային տնտեսությամբ, քանի որ յուրաքանչյուր երկրի կառավարություն սեփական հակաճգնաժամային քայլերն է ձեռնարկում եւ ավել կամ պակաս հաջողությամբ իրագործում:

Հայաստանի կառավարության հակաճգնաժամային միջոցառումներին անցյալ տարվա ընթացքում առիթ ունեցել ենք անդրադառնալ: Սակայն դրանց արդյունքների մասին հնարավոր էր խոսել միայն որոշ ժամանակ հետո: Այս տարվա 4 ամսվա ցուցանիշները նկատի ունենալով՝ փորձենք ներկայացնել, թե ի՞նչ է հաջողվել իրականացնել տնտեսության դիվերսիֆիկացման եւ հատկապես արդյունաբերության խթանման ուղղությամբ:

Անցյալ տարվա ընթացքում, կառավարության ստեղծած օպերատիվ շտաբի միջոցով, հավանության արժանացան 44 բիզնես նախագիծ, իսկ հետագա դրական ընթացք ստացան 24-ը: Թեեւ ներկայացվել էին մոտ 300-ը, բայց վերոնշյալ 24 արտադրական ընկերությունները ստացան պետական երաշխիքներ, սուբսիդավորում, այդ թվում՝ ուղղակի վարկավորման եւ կապիտալում պետության ներգրավման ձեւով: Այդ աննախադեպ քայլով, որը կիրառելի չէ ոչ ճգնաժային ժամանակում, նպատակ դրվեց առանձին ձեռնարկություններին օգնություն ցուցաբերելով ստեղծել նոր աշխատատեղեր, զարգացնել տեղական արտադրությունը, խթանել ներմուծման փոխարինումը տեղական արտադրանքով, նոր տեխնոլոգիաների կիրառումը, ավելացնել արտահանումը: Մի խոսքով, տնտեսության իրական հատվածին տրամադրվեց 14,1 մլրդ դրամ ֆինանսավորում՝ չհաշված հանքարդյունաբերության խոշոր կոմբինատներին տրված խոշոր վարկերը:

Տես էջ 2

AZG NEW PDF.qxd 11/06/2010 20:29 Page 1



# Հայաստանը կարեւորում է սկանդինավյան տարածաշրջանի հետ բազմաոլորտ գործակցությունը



Երեկ աշխատանքային այցով Հայաստան ժամանեց Ֆինլանդիայի արտգործնախարար Ալեքսանդր Ստուբը: Նախագահ Սերժ Սարգսյանի հետ հանդիպման ընթացքում Ստուբը նշել է, որ Ֆինլանդիան պատրաստ է իրացնել Հայաստանի հետ համագործակցությունն ընդլայնելու նոր հնարավորությունները: Իր հերթին նախագահ Սարգսյանը կարեւորել է Ֆինլանդիայի հետ երկկողմ եւ բազմակողմ համագործակցությունը. «Ֆինլանդիան իր անաչառ եւ կառուցողական դիրքորոշմամբ վստահության մեծ պաշար է ձեռք բերել եւ ցանկալի գործընկեր է Հայաստանի համար», նշել է Սերժ Սարգսյանը: Ալեքսանդր Ստուբը շեշտել է, որ իր երկիրը մեծ հետաքրքրությամբ է հետեւում մեր տարածաշրջանի վերջին զարգացումներին: ՀՀ նախագահը ներկայացրել է Հայաստանի դիրքորոշումները դրանց վերաբերյալ: Կողմերն ընդունել են, որ Հարավային Կովկասում խաղաղություն եւ զարգացում ապահովելու լավագույն երաշխիքը երկխոսության միջոցով խնդիրների լուծումն է եւ բարիդրացիական հարաբերությունների հաստատումը:

Նույն օրը Ֆինլանդիայի արտգործնախարարին ընդունել է նաեւ Էդվարդ Նալբանդյանը: Ողջունելով հյուրին՝ նախարարը նշել է, որ Ստուբի այցը Հայաստան, լայն հնարավորություններ կտա համագործակցության հեռանկարները քննարկելու համար: «Հայաստանը կարեւորում է Ֆինլանդիայի եւ սկանդինավյան տարածաշրջանի հետ բազմաոլորտ եւ փոխշահավետ գործակցության զարգացումը, եւ այդ նպատակով մեր օրակարգում է սկանդինավյան տարածաշրջանում Հայաստանի դեսպանատան հիմնումը», նշել է Նալբանդյանը՝ ընդգծելով, որ Հայաստանը Ֆինլանդիային տեսնում է, որպես վստահելի գործընկերոջ՝ մասնավորապես միջազգային կառույցներում ակտիվ համագործակցության առումով: Իր հերթին ֆինն նախարարը նկատել է, որ երկկողմ հարաբերությունների խորացման համար «կան անհրաժեշտ քաղաքական կամք եւ լավ նախադրյալներ»:

Երկու նախարարները նույնպես քննարկել են ղարաբաղյան հակամարտության եւ հայ-թուրքական հարաբերությունների հարցեր:

Հ. Ա.

# Անդրանիկ Մարգարյանն այսօր կլիներ 59 տարեկան



Այսօր անկախ Հայաստանի ամենաերկարակյաց վարչապետ Անդրանիկ Մարգարյանի ծննդյան օրն է, նա կդառնար 59 տարեկան: Հայաստանի հանրապետական կուսակցության ղեկավարությունը՝ նախագահ Սերժ Սարգսյանի ղեկավարությամբ, կայցելի Պանթեոն՝ Անդրանիկ Մարգարյանի շիրմին հիշատակի տուրք մատուցելու: Այնտեղ կլինեն նրա հարազատները, ընկերները ու գաղափարակիցները: Իրինդ գյուղում ապրող Մարգարյանի ազգականները նույնպես հիշատակի օր են կազմակերտել Իրինդում, որտեղ բացվելու է նրա արձանը:

Անդրանիկ Մարգարյանին հասարակ մարդիկ վերաբերվում էին որպես իրենցից մեկին: Նա հանգիստ շփվում էր բոլոր շերտերի մարդկանց հետ, գտնում նրանց հետ մտերման բանալին: Նա հենց նրանցից մեկն էր: Երբ ՀՀԿ ղեկավարից վարչապետ դարձավ, երբեք չփոխեց իր կենցաղը, չհիվանդացավ «էլիտարության» հիվանդությամբ, երբեք աչքաթող չարեց իր ճանաչած հասարակ մարդկանց: Դրա համար էլ նրան սիրում էին եւ այժմ էլ հիշում են սիրով:

Անդրանիկ Մարգարյանը վարչապետ դարձավ 1999 թվականի հոկտեմբերի 27-ից հետո առաջացած ներքաղաքական լրծուն վիճակում, ինչը շատերին թվում էր գլադիատորություն: Անգամ իր հարցազրույցներից մեկում նա այդ միտքն օգտագործել է: Նա հասկանում էր, որ անկառավարելի ներքաղաքական կրքերն ու պետության առանցքային դեմքերի կորստի ցավը կարող են անկանխատեսելի վիճակներ ստեղծել երկրի համար, բայց քաղաքական անցյալը, խորհրդային պատի դեմ պայքարի փորձը, Հանրապետական կուսակցության ստեղծման դժվարին ուղին անցնելու պարագան նրան հուշում էին, որ հենց ինքը գուցե կարողանա հաղթահարել այդ լրծուն վիճակը: Հաղթահարեց, չնայած ամեն պահի կողքից գուժում էին նրա հրաժարականը: Չէ, նրա տեսակը՝ անծայր համբերությամբ, հայկական կոդով, անկոտրում կամքով, դիմացող ու հաղթահարող տեսակ էր. դիմացավ, հաղթահարեց, դուրս եկավ ու երկիրը դուրս բերեց խենթ տարուբերումներից: Այսօր այդ բոլորը կհիշեն նրա կուսակիցները, նրա քաղաքական անցյալը կիսողներն ու մտերիմները: Նրա մահվանից՝ 2007 թվականի մարտի 25-ից մեկ տարի անց «**Ազգը**» գրեց. «Նրա քաղաքական փորձառությունը, մարդկային նկարագիրը, երկխոսություն վարելու ունակությունն ու մարդկանց օգնելու սովորույթը այսօր էլ ուսումնասիրման նյութ են եւ ընդօրինակման արժանի»:

Ճիշտ որ:

Մ. Խ.

# 50.000 լարի՝ հայկական եկեղեցու վերականգնման նախագծմանը

Վրաստանի պետական բյուջեից հատկացվել է 50.000 վրացական լարի կամ 26790 ԱՄՆ դոլար՝ Թբիլիսիի Մուղնեցոց Սուրբ Գեւորգ եկեղեցու վերականգնման նախագծա-նախահաշվային փաստաթղթերի փաթեթի պատրաստման համար: Այս մասին, ըստ Հայաստանի մշակույթի նախարարության, տեղեկացրել են Վրաստանի մշակույթի հուշարձանների պահպանության եւ սպորտի նախարարությունից: Գումարը հատկացվել է վրացական նախարարության մշակութային ժառանգության պաշտպանության ազգային գործակալությանը:

Վերականգնման նախագծի փաթեթի նախապատրաստումը կսկսվի հունիսի 15-ին, որին խորհրդատվության կարգով կմասնակցեն մասնագետներ նաեւ Հայաստանից:

Մուղնեցոց Սբ Գեւորգ եկեղեցին հիմնադրվել է 1356 թ., վերակառուցվել 1756 թ., իսկ 1852-93 թթ.՝ մասնակի նորոգվել: Վրաստանում խորհրդային կարգեր հաստատվելուց հետո եկեղեցին չի գործել: Այնտեղ մինչեւ 1980-ական թթ. վերջը գործել է ազգագրության թանգարանը, որը տեղափոխվել է կառույցում ճաքերի առաջացման պատճառով:

1990-ական թթ. սկզբից կառույցը համարվում էր վթարային եւ ժամանակավոր ամրացման աշխատանքներ չիրականացնելու հետեւանքով, բնական գործոնների ազդեցությունից շարունակեց քայքայվել, ճաքերը մեծացան, պատերի որոշ հատվածներ թեքվեցին: Եկեղեցին փլուզվեց 2009 թվականի նոյեմբերի 19-ին՝ հորդառատ անձրեւներից:

Ա. Հ.

# Էքստեռն կարգով դպրոցն ավարտածները չեն մասնակցում ընդունելության քննություններին

**ՀՀ կրթության եւ գիտության նախարար Արմեն Աշոտյանի 2009 թվականի նոյեմբերի 26-ի թիվ 949-Ն հրամանով արգելվել է 10-ից 11-րդ դասարան էքստեռն կարգով փոխադրումը, որի վերաբերյալ նախարարը բազմիցս հայտարարել է ինչպես զանգվածային լրատվամիջոցների հետ հանդիպումների ընթացքում, այնպես էլ Ազգային ժողովի ամբիոնից: Այս մասին տեղեկացնում է ԿԳՆ տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի վարչությունը:**

**Նախարարի 2010 թվականի փետրվարի 4-ի համապատասխան հրամանով հաստատվել է ՀՀ ԿԳՆ կրթության պետական տեսչության 2010 թվականի աշխատանքային ծրագիրը, որում նախատեսվում էր հանրակրթական ծրագրեր իրականացնող ՀՀ բոլոր ուսումնական հաստատությունների 10-11-րդ դասարաններում իրականացնել սովորողների շարժի (ընդունելություն, փոխադրում, տեղափոխություն) մշտադիտարկում:**

**Համաձայն ուսումնասիրությունների նախնական տվյալների՝ շուրջ 3500 աշակերտ 2009-2010 ուստարում ուսումը չի շարունակել 10-րդ եւ 11-րդ դասարաններում: Ուսումնասիրությունների ընթացքում բացահայտվել են կրթության բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրության խախտումներ, որոնց հետեւանքները վերացնելու նպատակով, օրենքով սահմանված կարգով, տրվել են կատարման համար պարտադիր հանձնարարականներ, իսկ կոպիտ խախտումների վերաբերյալ նյութերը սահմանված կարգով ուղարկվել են ՀՀ գլխավոր դատախազություն: Ուսումնասիրությունների ներկա փուլում բացահայտվել է նաեւ, որ «ՀՀ կառավարության աշխատակազմի Գնահատման եւ թեստավորման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից իրականացվող միասնական քննություններին մասնակցելու հայտ են ներկայացրել ՀՀ կրթության բնագավառը կարգավորող օրենսդրության խախտումով հայտագրված 39 դիմորդ, որոնց արգելվել է մասնակցել քննություններին:**

**Ներկայումս ուսումնասիրվում է նաեւ էքստեռն ավարտական կարգով քննությունների ընթացքը, վերջնական արդյունքները կհրապարակվեն սահմանված կարգով: Ուսումնասիրությունները կշարունակվեն նաեւ հուլիսին:**

**Հ. Ա.**

# Ի՞նչ տվեց պետական ֆինանսավորումը մասնավոր հատվածին

*1-ին էջից*

Այս տարվա ընթացքում արդեն կառավարությունը սկսեց տեղեկացնել, թե ինչ արդյունքներ է տվել պետական միջոցներով մասնավոր ընկերությունների առաջարկների ֆինանսավորումը: Ընդ որում, գործերի ընթացքին հետեւելու նպատակով որոշ ընկերություններ այցելեց վարչապետը: Տիգրան Սարգսյանը մասնավորապես այս տարի եղավ «Բիոկաթ», «Արտֆուդ» ընկերություններում, «Թամարա ֆրուտի» հիմնած օրգանիկ այգիներում՝ Տավուշի, Վայոց Ձորի եւ Կոտայքի մարզերում:

«Բիոկաթում», «Արտֆուդում» ներդրվել են նոր, ժամանակակից տեխնոլոգիաներ, ավելացել արտադրվող տեսականին, սկսվել են արտադրվել նոր ապրանքատեսակներ, ավելացել է աշխատողների թիվը, ստեղծվել մթերքների մանրէակենսաբանական հետազոտության նոր լաբորատորիա եւ այլն: «Արտֆուդին» տրամադրված պետական խոշոր գումարի՝ 1,4 մլրդ դրամի դիմաց պետությունը դարձավ այդ ընկերության 25 տոկոս կապիտալի բաժնետերը:

Իսկ «Թամարա ֆրուտի» օրգանիկ այգիներում հիմնվել են ազնվամորու, մոշի, սեւ եւ կարմիր հաղարջի մոտ 20 հա տնկարաններ, որը ծրագրված է հասցնել մինչեւ 65-70 հա-ի: Այս դեպքում ստեղծվող աշխատատեղերի թիվը մինչեւ ծրագրի ավարտը կհասնի 600-ի:

Բացի սննդարդյունաբերությունից, մրցութային առաջարկ ներկայացնողների թվում են եղել նաեւ արտադրութեան այլ ճյուղերի ընկերություններ: Օրինակ՝ «Էլեկտրասարք» ընկերությունը, որը ճգնաժամի պատճառով գտնվում էր շատ ծանր վիճակում, քանի որ չէր կարողանում ստանալ իրացված ապրանքի դիմաց գումարը, շնորհիվ պետական 150 մլն դրամ ֆինանսավորման ոչ միայն կարողացավ պահպանել իր աշխատատեղերը, այլեւ, ձեռք բերելով նոր սարքավորումներ, սկսեց թողարկել նոր արտադրատեսակներ՝ մեկուսիչ աքցաններ, ալյումինե հանգույցներ, հողանցման սարքեր եւ այլն:

Սակայն հարկ է նաեւ նշել, որ արձանագրվել է նաեւ տրամադրված գումարը ոչ նպատակային ծախսելու դեպք: Սեւանի Կատարողական սարքավորումների գործարանին տրամադրած 100 մլն դրամը իր նպատակին չի ծառայել՝ ընկերությունը ձեռք չի բերել հաստոցներ, չեն ստեղծվել նոր աշխատատեղեր: Որոշվել է տվյալ ընկերությունից հետ վերցնել տրամադրած 100 մլն դրամը:

Այնուամենայնիվ, ակնհայտ է, որ ճգնաժամի պայմաններում բացառապես հակաճգնաժամային նշանակություն ունեցող այս քայլը, որի մասին մասնավոր հատվածի ներկայացուցիչները նախկինում չէին էլ կարող ենթադրել, ապացուցեց իր արդյունավետությունը: Ի թիվս հակաճգնաժամային նշանակություն ունեցող այլ քայլերի, արդյունաբերության զարգացման միջոցով տնտեսության դիվերսիֆիկացման նպատակ ունեցող այս ծրագիրը եւս իր բաժինն ունեցավ այդ տարվա առաջին 4 ամիսներին արդյունաբերության գրեթե 13 տոկոսանոց աճի մեջ: Հայտնի է, որ մեր արդյունաբերության ցուցանիշների վրա հիմնականում ազդում են հանքարդյունաբերական ընկերությունները եւ մետաղների գները միջազգային շուկայում, բայց միանշանակ է, որ արտադրության այլ ոլորտների մասնաբաժինը արդյունաբերության ցուցանիշների մեջ մոտակա 1-2 տարվա ընթացքում ավելի նկատելի կլինի:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԺԹ տարի

Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
**www.azg.am**

Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635

Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221

Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960

Լրագրողների սենեակ / հեռ 581841

Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483

*Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն*
/ հեռ 529353

Համակարգչային շարուածքը
«Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

AZG NEW PDF.qxd 11/06/2010 20:29 Page 1



# Եվրոմիության խորհրդատվական խմբի հայաստանյան փորձը՝ մոդել Արեւելյան գործընկերության մյուս երկրների համար

Հայաստանում Եվրոմիության խորհրդատվական խմբի աշխատանքների առնչությամբ կազմված եւ Հայաստանի ազգային անվտանգության խորհրդի քարտուղար Արթուր Բաղդասարյանի նախագահությամբ գործող խորհուրդը երեկ հերթական՝ 4-րդ նիստն էր գումարել, որտեղ ներկայացվեց ԵՄ խորհրդատվական խմբի աշխատանքների հաշվետվությունը:

Նիստի համանախագահ **Արթուր Բաղդասարյանը** շնորհակալություն հայտնեց ԵՄ-ի պատվիրակությանը եւ խորհրդատվական խմբին՝ կատարած աշխատանքի համար: Խորհրդատվական խմբի հետ աշխատանքի արդյունքում դրական ձեռքբերումների շարքում Բաղդասարյանն ընդգծեց դիվանագիտական ակադեմիայի բացումը Հայաստանում, առաջընթացը վիզաների տրամադրման դյուրացման, ոստիկանության բարեփոխումների հարցերում:

Նիստը համանախագահող, Հայաստանում ԵՄ-ի պատվիրակության ղեկավար Ռաուլ դե Լուզենբերգերն, իր հերթին, ընդգծեց, որ ԵՄ-ի համար կարեւոր է խորհրդատվական խմբի աշխատանքների գնահատականը: Դեսպանի խոսքերով, խորհրդատվական խմբի գործունեությունը Հայաստանում այդօրինակ առաջին փորձն է, որ կարող է մոդելային դառնալ ԵՄ-ի համար՝ մյուս երկրներին աջակցություն տրամադրելիս: Այսպիսի մի խումբ արդեն իսկ գործում է Մոլդովայում, եւ Արեւելյան գործընկերության մյուս երկրները եւս մտածում են այդ ուղղությամբ:

Այս փուլը, որ ֆինանսավորվում էր կայունության գործիքի ներքո, կարող է շարունակվել մինչեւ հուլիս, այդուհետեւ արդեն Հայաստան-ԵՄ հարաբերություններում անցում կլինի հենց Հարեւանության ծրագրի շրջանակներում ֆինանսավորմանը:

Խորհրդատվական խմբի թիմի ղեկավար **Ռոլֆ Բյոնկեի** խոսքերով, իրականացրած աշխատանքում նորարարությունն այն էր, որ մի քանի խնդիրներ զուգահեռաբար էին հասցեագրվում: Ընդ որում, խորհրդատվական խմբի աշխատանքը, ըստ ղեկավարի, նաեւ յուրահատուկ գործիք է՝ արագ արձագանքելու Հայաստանի կառավարության կողմից ներկայացվող հարցերին:

Ամեն դեպքում, Բյոնկեի ներկայացմամբ, խումբը երկու հիմնական ուղղությամբ է աշխատել՝ լավ կառավարում եւ կայուն տնտեսական զարգացում: Առաջինի տակ պետք է հասկանալ կոռուպցիայի դեմ պայքարին, պետական կառավարմանը, վարչարարության բարելավմանը, մարդու իրավունքներին, խորհրդարանական ընթացակարգերին, անվտանգությանը վերաբերող հարցերը: Կայուն տնտեսական զարգացումն էլ ներառում է խնդիրները, որ վերաբերում են Արեւելյան գործընկերության շրջանակներում նախապատրաստվող խոր եւ համապարփակ ազատ առեւտրի համաձայնագիրն իրականություն դարձնելուն:

Քանի որ երեկվա քննարկումը նպատակ ուներ ոչ միայն անդրադառնալ խորհրդատվական խմբի կատարած, այլեւ հետագա աշխատանքին, ապա Բյոնկեն ներկայացրեց հետագա համագործակցության մի քանի հավանական ուղղություններ: Մասնավորապես, խորհրդատվական խմբի ղեկավարը նշեց, որ պետք է անդրադառնալ խոր եւ համապարփակ ազատ առեւտրի համաձայնագրի նախապատրաստման ընթացքին, քանի որ արդեն սկսվել են ասոցացման համաձայնագրի բանակցությունները: Գործունեության կարեւոր ոլորտ կարող են լինել նաեւ պետական պարտքին, արդարադատությանը, ազատությանն ու անվտանգությանը, նաեւ քաղծառայության համակարգի բարեփոխումներին առնչվող հարցերը:

Պետական եկամուտների կոմիտեի, ֆինանսների, էկոնոմիկայի, գյուղատնտեսության նախարարությունների ներկայացուցիչները մի շարք դիտարկումներ ներկայացրին ինչպես խորհրդատվական խմբի հետագա գործունեության համար հավանական ոլորտների, այնպես էլ արդեն իսկ կատարված աշխատանքի հաշվետվության առնչությամբ: Հաշվետվության մասով ընդհանրական էր այն, որ ըստ Հայաստանի կառավարության ներկայացուցիչների, փաստաթղթի առնվազն հայերենում բավականին անճշտություններ, չափազանցություններ, սխալներ կան:

Խորհրդատվական խմբի հետագա գործունեության առնչությամբ առաջարկությունները, Արթուր Բաղդասարյանի ընդհանրացմամբ, տասը օրվա ընթացքում նախարարություններից կներկայացվեն ԱԱԽ, այդուհետեւ կհանձնվեն ԵՄ-ի պատվիրակությանը:

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# «Սինոփսիսը» գնեց «Վիրաժ Լոջիկի» բաժնետոմսերը




Կիսահաղորդիչների մշակման եւ արտադրության համաշխարհային առաջատար «Սինոփսիս» ընկերությունը ձեռք բերեց հիշողության սարքերի առաջատար ընկերություն «Վիրաժ Լոջիկի» բաժնետոմսերը: ԱՄՆ Կալիֆոռնիայի նահանգի Մաունթին Վյու քաղաքում ստորագրված այդ պայմանագրի վերաբերյալ երեկ «Սինոփսիս Արմենիայում» լրագրողներին մանրամասներ հաղորդեցին «Սինոփսիս» ընկերության փոխնախագահ Ռիչ Գոլդմանը, «Վիրաժ Լոջիկ» ընկերության փոխնախագահ Երվանդ Զորյանը եւ «Սինոփսիս Արմենիա» ընկերության գործադիր տնօրեն Հովիկ Մուսայելյանը:

Ռիչ Գոլդմանը տեղեկացրեց, որ «Սինոփսիսը» «Վիրաժ Լոջիկի» յուրաքանչյուր բաժնետոմսի համար պետք է վճարի 12 դոլար, իսկ ձեռքբերման ընդհանուր գինը կկազմի 315 մլն դոլար: Նա ընդգծեց, որ կիսահաղորդիչների եւ հիշողության սարքերի արտադրության ընկերությունների միավորվելով հնարավորություն է ստեղծվում ավելի ամբողջական արտադրանք թողարկելու, եւ որ «Սինոփսիսը» վաղուց էր հիանում «Վիրաժ Լոջիկի» արտադրանքով:

Երվանդ Զորյանն ավելացրեց, որ «Սինոփսիսը» բավականին լավ կապեր ունի շուկայում, ինչը հնարավորություն կտա համատեղ արտադրանքն ավելի հաջողությամբ վաճառելու:

Երկու ընկերությունների ներկայացուցիչները տեղեկացրին, որ միավորման գործընթացը կշարունակվի մինչեւ այս տարվա հոկտեմբեր ամիսը, եւ այդ ընթացքում ընկերությունները գործելու են առանձին-առանձին: Իսկ միավորումից հետո պետք է վերանայվեն աշխատակիցների, շենքերի հետ կապված հարցերը, եւ գործելու են որպես մեկ ընկերություն «Սինոփսիսի» կառուցվածքում:

Ա. Մ.

# «Ուսանողական այգու» ճակատագիրը մտահոգում է Բյուրականի աստղադիտարանի տնօրենին

«Ուսանողական այգու» տարածքում գտնվող փոքրիկ աստղադիտարանի նշանակությունը չափազանց կարեւոր է: Այն ներառված է պետական հուշարձանների պահպանման ցանկում: ԵՊՀ աստղագիտության ֆակուլտետի մագիստրանտները գիշերներն աստղադիտումներ են կատարում, ցերեկներն այնտեղ դասալսումներ են ընթանում, ու աստղադիտարանը լրացնում է շրջակայքի գիտակրթական միջավայրը: Հետեւաբար նման կառույցի հարեւանությամբ ապագայում տեսնել սրճարան, ուր քաղաքի շփացած զանգվածն է այցելելու, ուր երեկոյան ժամերին երիտասարդ աստղագետները ստիպված են լինելու Արմենչիկի ու Թաթուլի կամ արաբական երաժշտության ու հարբածների բարբաջանքների ներքո կատարել աստղադիտումներ, չի պատկերացնում նաեւ Բյուրականի աստղադիտարանի տնօրեն Հայկ Հարությունյանը: «Մենք ենք այս քաղաքի տերը» նախաձեռնության անդամները, որ պայքարում են Ուսանողական այգին նախկին տեսքին բերելու եւ կառուցվող բետոնե սրճարանները ապամոնտաժելու ուղղությամբ, օրերս հանդիպել են Հայկ Հարությունյանին, ներկայացրել «Ուսանողական այգու» խնդիրը, այգին պահպանելու անհրաժեշտությունն ու ստացել Հայկ Հարությունյանի խոստումը՝ ամեն հարցում աջակցել՝ պահպանելու համար այգին:

«Աղմուկը խանգարում է բոլորին: Իհարկե, դժվար կլինի երաժշտության ներքո հետազոտություն անցկացնել, սակայն մեզ առավելապես անհանգստացնում է լույսի առկայությունը: Ուսանողները երեկոյան ժամերին դիտումներ են կատարում, հետազոտություններ անցկացնում, ու գիտական արդյունքի հասնելու համար անհրաժեշտ է, որ շրջակայքում մութ լինի, իսկ էլեկտրական լույսի առկայությունը երկնքում կառաջացնի աղտոտվածություն: Այդ պարագայում հետազոտություն հնարավոր չէ կատարել: Փոքր աստղադիտարանը ճարտարապետական կառույց է, եւ անթույլատրելի է, որ աստղադիտարանի շրջակայքում լինի աղմուկ, սրճարանային խրախճանք», «**Ազգ**»-ին ասաց **Հայկ Հարությունյանը**: Երիտասարդ ակտիվիստների հետ խնդիրը քննարկելուց հետո «Ուսանողական այգու» հարցը բարձրաձայնվել է նաեւ աստղադիտարանի գիտական խորհրդի նիստում: Շուտով խորհուրդը նամակ կուղարկի ՀՀ նախագահին կամ վարչապետին՝ արտահայտելու «Ուսանողական այգու» խնդրի վերաբերյալ իրենց մտահոգությունները:

Հ. Հ.

ԱԶԱՏԱՄԱՐՏ

# Մեզ այսօր էլ է անհրաժեշտ Մոնթե Մելքոնյանի կամքի ուժը



Լրանում է ազգային հերոս Մոնթե Մելքոնյանի (1957-1993) մահվան տարելիցը:

«Մոնթե Մելքոնյանը մեզ համար նաեւ ուսուցանող կերպար է: Նրա մուտքը Հայաստանի ազատագրության հայ գաղտնի բանակի՝ ԱՍԱԼԱ-ի շարքերը դրական իմաստով որակական նոր վիճակ ստեղծեց ԱՍԱԼԱ-ի ներսում, սակայն 1983-ին նա դուրս եկավ ԱՍԱԼԱ-ից», երեկ «Արմաս» ակումբում ասաց ԱՍԱԼԱ-ի նախկին անդամ, «Մոնթե Մելքոնյան» հիմնադրամի ղեկավար Ալեք Ենիգոմշյանը:

Մոնթե Մելքոնյանը եկել է Հայաստան 1990-ի վերջերին: Նա մեծ դեր է խաղացել Արցախի ինքնապաշտպանության եւ պատմական հայկական հողերի ազատագրման գործում:

Ալեք Ենիգոմշյանը, որը եղել է Մոնթե Մելքոնյանի մտերիմ ընկերը, նշեց, որ Մ. Մելքոնյանը մասնակցելով Արցախի ազատագրական պայքարին, շատ լավ գիտակցում էր, թե Արցախն ինչ նշանակություն ունի հայ ժողովրդի գոյության եւ ապագայի համար: Լինելով հրամանատար՝ իրավունքների առումով նա իրեն ամենապարզ զինվորից էլ ստորադաս է համարել: «Մոնթեի ամենակարեւոր հատկանիշներից է նաեւ նրա կամքի ուժը: Հուսահատություն բառը նրա համար գոյություն չի ունեցել, մեզ այսօր էլ անհրաժեշտ են Մոնթեի չհուսահատվելու վճռականությունն ու կամքի ուժը», հավելեց Ա. Ենիգոմշյանը:

Ասուլիսի մյուս բանախոսը՝ հատուկ նշանակության խմբի հետախուզական դիվերսիոն խմբի հրամանատար Վովա Վարդանովը նշեց, որ սկզբում չի ցանկացել ջոկատում ընդգրկել սփյուռքահայի, այսինքն՝ Մոնթե Մելքոնյանին. «Երբ զրուցեցի Մոնթեի հետ, հասկացա, որ նա շատերից ավելի հայ էր: Մոնթեն չի սպանվել, նա իր կյանքը կամավոր զոհաբերել է այս ազգի համար»:

Վովա Վարդանովը պատմեց, որ Տյումենի հյուսիսում (Ռուսաստան) 1993 թվականին Մոնթե Մելքոնյանի զոհվելու կապակցությամբ թուրքերը նույնիսկ մեծ բանկետ էին կազմակերպել: «Սրանով էլ կարելի է չափել, թե ինչ արժեք ուներ Մոնթեն», ավելացրեց Վ. Վարդանովը:

Ի. Պ.

# Պարտվում ենք ադրբեջանցիներին քարոզչական պատերազմում

## *Միջազգային հանրությունն այսօր հավատում է Ադրբեջանին*

«Խոջալուում հայերն իրականացրել են ադրբեջանցիների ցեղասպանություն», միաբերան բղավում են ադրբեջանական բոլոր լրատվամիջոցները, տարբեր պաշտոնյաներ ամենատարբեր միջազգային ամբիոններից: Իսկ որ Մարաղայում իրականացվել է հայերի ցեղասպանություն, որ Բաքվում, Սումգայիթում, Կիրովաբադում կատարվել է հանցանք՝ ընդդեմ մարդկությանը, միջազգային հանրությունը «տեղյակ չէ», ինչո՞ւ չակերտների մեջ, որովհետեւ շատ երկրներ՝ կոնկրետ ԽՍՀՄ իրավահաջորդ Ռուսաստանը, հաստատ գիտեն՝ ինչ է կատարվել ադրբեջանական քաղաքներում (եւ ոչ միայն) հայերի հետ: Սակայն արդարության հասնելու համար անհրաժեշտ է տարածել սեփական կարծիքը, նույնիսկ եթե այն միակ ճշմարտությունն է: Սակայն գաղտնիք չէ, որ Ղարաբաղի մասին միակ ճշմարտությունն այսօր ընդունում են միայն Հայաստանում, Սփյուռքը եւ «Հայաստանի բարեկամները», ինչպես սիրում է կրկնել Իլհամ Ալիեւը, այնինչ «Խոջալուում ադրբեջանցիների ցեղասպանությանը» աշխարհում հավատում են շատերը՝ նավթադոլարային հիմնով՝ ակտիվ քարոզչության արդյունքում: Այս առումով Հայաստան եւ ԼՂՀ այցելած բրիտանական խորհրդարանի Լորդերի պալատի նախկին փոխխոսնակ բարոնուհի Քերոլայն Քոքսը բավական դիպուկ կոչ է արել համայն հայությանը՝... զարթնել. «Կոչ եմ անում հայկական կողմին՝ զարթնել, պատմել աշխարհին այն մասին, թե ինչ է տեղի ունեցել ձեզ հետ 90-ականների սկզբներին: Քարոզեք ձեր ճշմարտությունը. միջազգային հանրությունն այսօր հավատում է Ադրբեջանին», նշել է բարոնուհի Քոքսը «Ազատություն» ռադիոկայանին տված հարցազրույցում, ընդգծելով, որ Մարաղայում տեղի ունեցածը «հանցագործությունն էր ընդդեմ մարդկությանը»: Քերոլայն Քոքսը վաղուց է հայտնի իր հայանպաստ գործունեությամբ. նա բազմիցս է Լորդերի պալատում բարձրաձայնել Հայոց ցեղասպանության հարցը: Բրիտանական խորհրդարանի վերին պալատի՝ Ցեղասպանության վերաբերյալ վերջին քննարկումներում նույնպես «հայկական կողմի» ակտիվիստներից էր բարոնուհի Քոքսը: Սակայն եթե մենք մեր աղքատիկ միջոցներով կարողանում ենք առանձին, թեկուզ նշանավոր ու կարեւոր անձանց պատմել միակ ճշմարտությունը, ապա ադրբեջանական քարոզչամեքենան ընդունակ է կլանելու ամբողջ կառույցներ, ապացույցը՝ օրերս Իսլամական երկրների գագաթաժողովի ընդունած Դուշանբեի հռչակագիրը՝ «Հայաստան ագրեսորով», եւ, իհարկե՝ Եվրոպառլամենտի՝ 2216-ը:

Ըստ երեկ ասուլիս հրավիրած «Շուշի» բարեգործական հիմնադրամի տնօրեն Բակուր Կարապետյանի, քարոզչական դաշտում ադրբեջանցիների դեմ արդյունավետ պայքարելու համար անհրաժեշտ է, որ Հայաստանի իշխանությունները գիտակցեն քարոզչության կարեւորությունն ու նշանակությունը: «Մենք ունենք ամեն ինչ. մեր ճշմարտությունն ավելի զորեղ է, բայց այդ ճշմարտությունը պետք է տեղ հասցնել: 90 անգամ ասված ստին գուցե չհավատան, բայց 100-րդին անպայման հավատում են: Ադրբեջանական քարոզչությունը հենց քանակի վրա է շեշտը դրել, չնայած վերջին ժամանակներում նրանք ուշադրություն են դարձնում նաեւ որակին՝ ահռելի գումարներ ծախսելով եւ անհրաժեշտ մարդկանց դիմելով: Իսկ Հայաստանում այս աշխատանքներով զբաղված են անհատ մարդիկ, որոնք, ինչ խոսք, չեն կարող միայնակ դիմակայել ադրբեջանական քարոզչամեքենային», նշեց Կարապետյանը:

Ավելորդ չենք համարում եւս մեկ անգամ շեշտել բարոնուհի Քոքսի խոսքը. «Կոչ եմ անում հայկական կողմին՝ զարթնել...»:

ՀՈՎԻԿ ԱՖՅԱՆ

AZG NEW PDF.qxd 11/06/2010 20:29 Page 1



# Ո՞ւմ համար է ինչում հանրային կարծիքը

Ասել, թե «Լեզվի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու կամ ավելի պարզ՝ օտարալեզու դպրոցներ բացելու օրինագիծը վերջերս թեժ քննարկումների նյութ է դարձել, սխալ է: Թեժ կարող են համարվել այն քննարկումները, երբ բանավիճողները բաժանվում են երկու (կամ ավելի) հավասարազոր մեծ խմբերի, որոնք բերում են երկու կարծիքները հաստատող կամ մերժող փաստարկներ: Մինչդեռ բոլորովին էլ այդպես չէ: Մի քանի պաշտոնատար մարդկանց առաջարկի դեմ բողոքեցին հազարավորները՝ Գիտության ազգային ակադեմիայի գիտնականները, բուհերի դասախոսները, հասարակական կազմակերպությունները, միությունները, գրողները, արվեստագետները, մանկավարժները, իր Ոչը ասաց Հանրային խորհուրդը՝ համոզիչ փաստարկներով հաստատելով, որ այդ օրինագծի ընդունումը եւ կիրառումը ազգավնաս, աղետալի հետեւանքներով է հղի, անընդունելի է ազգային-պետական հարցերի հայեցակետից, եւ հույս հայտնեցին, թե օրինագիծը Ազգային ժողով չի ուղարկվի:

Բայց, ինչպես միշտ... մտավորականություն է, էլի, թե ուզում է, թող խոսի... կառավարությունը «որսալով լրատվական դաշտից այդ ազնիվ մտահոգությունների եւ ինտելեկտուալ աշխատանքի բյուրեղները»՝ եզրակացություններ է արել եւ որոշել է... փաթեթը ուղարկել խորհրդարան: Նախ, իհարկե, գիտության, կրթության, մշակույթի, երիտասարդության ու սպորտի հարցերի մշտական հանձնաժողով, որը պարտավոր է, ինչ էլ լինի, այն հասցնել ԱԺ լիագումար նիստի քննարկման: Հանձնաժողովը թեեւ դժվարությամբ (մեկ ձայնի առավելությամբ՝ 4 կողմ, 3 դեմ) «պատվով» կատարեց իր պարտականությունը: Եկեք չկասկածենք նաեւ Ազգային ժողովի «բուռն քննարկումների» արդյունքին: Բայց...

Մեզանից ո՞վ համոզված չէ, որ օտարալեզու դպրոցների (առայժմ սահմանափակ թվով) թույլտվությունը շղթայական ռեակցիայով հետագայում լայն ծավալներ է ընդունելու (կարեւորը սկիզբն է՝ թույլատրելը): Հստակ չէ ու մանավանդ՝ կանխատեսելի, ընթացքի շարունակությունը: Յուրաքանչյուր օտարալեզու դպրոցում քանի՞ աշակերտ է լինելու, ի՞նչ սկզբունքով են ընտրվելու աշակերտները. պետական դպրոց է, ուրեմն՝ անվճար, մասնավոր է, ուրեմն՝ վճարովի, իսկ եթե շատե՞րն են ուզում: Ուռճանալու են թվերը, բնականաբար, մյուս՝ հայալեզու դպրոցների հաշվին. առաջիններում կլինեն հինգական, երկրորդում՝ մեկական դասարաններ: Չմոռանանք նախկին ռուսական ու նաեւ անգլիական թեքումով դպրոցների աշակերտների թվաքանակները: Դպրոցների քանակը կարեւոր չի լինելու, այլ աշակերտների, որ հաստատապես, հավաքվելու են օտարալեզու դպրոցներում, քանի որ մրցակցելու են նրանց ծնողները, մի մասը՝ «էլիտար» դպրոցում երեխա ունենալու ցուցամոլությամբ, մի մասը՝ ազնիվ մղումներով, որ իրենց զավակները լավ պայմաններ ունեցող (չենք կասկածում, որ այդպես կֆինանսավորվեն) դպրոցներում լավ կրթություն ստանան, մյուս մասը՝ իրենց զավակների ապագայով մտահոգված (դրսում կամ ներսի արտասահմանյան կազմակերպություններում աշխատանք գտնեն), մյուս մասը՝ երկրից արտագաղթելու հեռանկարը փայփայելով: Եվ ոչ մի կասկած, որ ծաղկելու է կոռուպցիան (ինչպես տարիներ առաջ ռուսական ու անգլիական թեքումով դպրոցներում): Եթե հանկարծ պետական ու ոչ վճարովի լինեն այդ դպրոցները, ուրեմն (հայտնի են միջոցները) հավաքվելու են այնտեղ պաշտոնյաների ու փողատերերի երեխաները, եթե մասնավոր լինեն ու վճարովի, որ առավել ենթադրելի է, նույնպես նույն խավն է հավաքվելու: Հետեւաբար ստեղծվելու է սոցիալական ընդգծված կրթահամակարգ՝ իր ծանր հետեւանքներով. այդ «էլիտար» դպրոցներում տեղ չեն ունենալու աղքատ խավի, հետեւաբար նաեւ ու հատկապես գյուղական վայրերի երեխաները: Հասկանալի է, որ հետագա մրցակցության մեջ՝ բուհ, գիտություն, աշխատանք, վերջիններս զիջելու են առաջիններին, նրանց միջեւ ստեղծվելու է անջրպետ, խորթացում, մինչդեռ նույն դպրոցում, նույն ու նույնալեզու կրթական ծրագրի սահմաններում ամենահամեստ ընտանիքի երեխան էլ անգամ ամենահեռավոր գյուղում, նպաստավոր պայմաններում, իր ձիրքերի շնորհիվ կարող է հաջողության հասնել, բուհ ընդունվել, սովորել նաեւ օտար լեզու, իր խոսքը ասել եւ՛ գիտության մեջ, եւ՛ տարբեր ասպարեզներում: Ուրեմն առավել վտանգավորը սոցիալական շերտավորվածության հեռանկարն է:

Ամեն դեպքում, մենք հայի հոգով, հայի էությամբ լցված զանգված ենք կորցնելու, հայերեն չխոսող (թեկուզ նաեւ խոսող), հայ գրականություն չկարդացող, հայեցիորեն չմտածող զանգված, մեր փոքր երկրի, առանց այն էլ սակավ բնակչությունից: Չմոռանանք, որ նրանք ապագայում նաեւ ծնողներ են դառնալու, զավակներ են ունենալու եւ այդ զավակները պետք է գնան ծնողների ճանապարհով:

Երբ դեռ 1920-ականներին Շահան Շահնուրը ահազանգ էր հնչեցնում սփյուռքահայության նահանջի մասին՝ արձանագրելով, թե մենք *«դեռ կը նահանջենք բանիվ եւ գործով, կամա եւ ակամա, գիտությամբ եւ անգիտությամբ»*, գլխավոր աղետը այդ նահանջի մեջ համարում էր հատկապես գալիք սերունդների այլասերումը: Պատերազմի կամ դժվար տարիներին շատերը փախան, լքելով *«տուն, տեղ, երկինք», «եղան նաեւ ազգ ու լեզու ուրացողներ»,* սակայն այդ ամենը այնքան էլ սարսափելի չէ, սարսափելին այն է, տագնապ էր հնչեցնում Շահնուրը, որ կորցնելու ենք նրանց սերունդներին՝ հայ *«մանուկներ, որոնք կրնային մեծնալ, ապագայի սերունդներ, որոնք մեզմե վերջ պիտի գային: Որովհետեւ ան, որ պիտի գա, պիտի ըլլա օտար, բանիվ եւ գործով»*: Բանիվ եւ գործով.... Ու պատահական չէ, որ նահանջի մեջ Շահնուրը հատկապես ընդգծում է, երիցս կրկնելով՝ *«կը նահանջէ լեզուն, կը նահանջէ լեզուն, կը նահանջէ լեզուն»...*

Լեզուն, որ ազգության պահպանության առաջին պայմանն է: Հայոց լեզուն՝ մեր սրբություն սրբոցը, նաեւ՝ մեր լեզվով՝ մեր գրականությունը: Առանց այդ էլ այսօր մեր օտարամոլները՝ հանուն շահի ու ցուցամոլության, ամեն օր եթերում ոչ միայն մեր գրական հայերենն են աղավաղում, այլեւ օտար բառերով խճողում են այն: Կարդացե՛ք հեռուստահաղորդումների ծրագրերը, լսեցե՛ք ելույթ ունեցողների խոսքերը, որոնք լի են օտար բառերով: Եվ ի՜նչ գոհունակությամբ ու հպարտությամբ են արտասանում՝ քոմեդի քլաբ, պրոդակշն, քլաբ բար եւ այլն: Մտավորականները բազմիցս գրել են այս մասին, բայց նրանք, որ կարող են կանխել, անտարբեր են: Չես հասկանում, հեռուստաընկերությունները չե՞ն կարող մի խմբագիր պահել, թե՞ չեն ուզում, «թքած ունեն», արգելողները նույնպես չե՞ն կարող, թե՞ նույնպես... Մեր աչքի առաջ. մեր իսկ թողտվությամբ ու ջանքերով մեր լեզուն աղավաղվում է:

Ուրե՞մն... ավելի լավ չէ՞ միանգամից անցնել օտարալեզու ուսուցմանը: Դպրոցից: Եթե դասերը աշակերտը յուրացնի օտար լեզվով, կարդա ու գրի օտար լեզվով, դեռ մանուկ հասակից տիրապետի օտար լեզվին՝ նրբերանգներով, ձեռք բերի օտար լեզվամտածողություն (սա է հեռահար նպատակը) ուրեմն էլ հայերենը... չի աղավաղվի: Այդ աշակերտները հայերենը չեն էլ սովորի, որովհետեւ խորթանալու են նրան, որովհետեւ հայ գրականություն չեն էլ կարդալու, հայագիտական առարկաները նրանց համար երկրորդական կամ ավելորդ են դառնալու, մի կերպ «յոլա են տանելու», «ձեռքի հետ»... Այդ փորձը մենք ունենք. հիշեցնելու հարկ կա՞, թե ժամանակին ռուսական դպրոցներում ինչպես էին «յուրացնում» այդ առարկաները: Լավագույն դեպքում մնալու է՝ տեղեկատվություն այդ առարկաներից՝ առանց հայ գրականության ու պատմության ոգու եւ գեղեցկությունների, հայոց լեզվի նրբերանգների զգացողության: Այսինքն՝ առանց հայեցի մտածողության ու դաստիարակության: Հայտնի է (մանկավարժները, հոգեբանները վաղուց են հաստատել), որ երեխան տարրական դպրոցում ընդամենը իր էության, մտածողության, ազգային տեսակի հիմքերն է դնում, նրա ձեւավորումը, ամբողջացումը տեղի է ունենում հատկապես միջին դպրոցում, որ ամբողջ հինգ տարի է (որտեղից էլ հենց հատուկ միտումով առաջարկվում է օտարալեզու ուսուցումը), իսկ ավագ դպրոցը գիտելիքների կուտակման համար է:

Հետեւաբար, ի՞նչ է մեր ուզածը: Թեքե՞լ, շեղե՞լ մեր հայկակների հայեցի հասունացման ընթացքը:

Բայց տեսեք, առաջարկվում է «զիջում». հումանիտար առարկաները (թվարկվում է՝ հայոց լեզու, հայ գրականություն, հայոց պատմություն, կրոն) պիտի սովորեն մայրենի լեզվով: Հրաշալի է: Ճիշտ այդպես է Թուրքիայում, Իրանում եւ ընդհանրապես սփյուռքի «հայկական» դպրոցներում: Այնտեղ պետությունը նույնպես թույլատրում է հայերենով անցնել նույն առարկաները: Նրանք՝ օտարազգի փոքրամասնություններին, Անկախ Հայաստանի Հանրապետությունում մենք՝ մեզ:

Բայց ի վերջո, ո՞րն է նպատակը, որին հասնելու համար, չլսելով հանրության խոսքը, պետք է փոփոխվի լեզվի օրենքը: Ինտեգրվել եվրոպական կրթական համակարգի՞ն, գիտությանն ու գեղարվեստի՞ն, վերջին ուղղումով՝ միջազգային մակարդակի որոշ դպրոցնե՞ր ունենալ: Ուսուցման նոր համակա՞րգ ստեղծել զուգահեռաբար:

Թո՛ղ որ: Ո՞վ է դեմ: Այդ ամենը (լավագույնը) ներդնենք մեր դպրոցական ողջ համակարգում: Լինենք հավասարապես, բոլորին տանք այդ հնարավորությունը եւ ոչ թե՝ «ընտրյալներին»: Իսկ եթե խանգարող պատճառը օտար լեզվի վատ յուրացումն է, թող ներդրվեն ֆինանսական միջոցներ (մեր պետությունը թե օտար պետությունները կամ հայրենի բարերարները, եթե իրոք նրանք գործում են մարդասիրական մղումներով) եւ օտար լեզուների (նաեւ՝ հայ) ուսուցումը հատուկ ուշադրության արժանացվի. ստեղծվեն ուսուցման փոքր խմբեր, մշակվեն գործնական նոր մեթոդներ հենց հայալեզու դպրոցներում: Կամ թող դա արվի ավագ դպրոցում, կամ բուհերում, երբ արդեն ձեւավորված է հայ լեզվամտածողությամբ պատանին:

Չենք կարծում, թե մեր փոքրիկ երկրի համար օտարալեզու կամ օտար լեզու ուսուցող բուհերը բավարար չեն: Հայ-սլավոնական համալսարան, Եվրոպական ու Ֆրանսիական համալսարաններ, Ամերիկյան համալսարան, որոնք միայն հումանիտար բուհեր չեն, Լեզվաբանական համալսարան (ըստ էության՝ օտար լեզուների), Պետական համալսարանի ռոմանագերմանական բանասիրության (որն այսօր շուրջ 1800 ուսանող ունի), ռուս բանասիրության ֆակուլտետներ եւ նման ֆակուլտետներ Հայաստանի պետական ու ոչ պետական բոլոր համալսարաններում: Հաշվենք, թե տարեկան քանի «օտարալեզու» շրջանավարտ են տալիս այդ բուհերը: Այս քանակությունը բավարար է անգամ մեզանից շատ ավելի բազմամարդ երկրներին: Սրան ավելացնենք ոչ հումանիտար ֆակուլտետների այն ուսանողներին, որ կամա թե ակամա յուրացնում են օտար լեզուները մասնագիտական (եւ ոչ միայն) գրականություն կարդալու համար:

Եթե նպատակը օտար լեզվին լավ տիրապետող թարգմանիչներ ունենալն է, այսօր մենք պահանջվածից շատ ավելին ունենք: Բացառապես բնագրից թարգմանված հրաշալի գրականություն է լույս տեսնում: Բուհերի ուսանողների համար կարող են թարգմանվել կամ գրվել բոլոր լավագույն դասագրքերը: Իսկ գիտության մեջ խորացողների համար թարգմանական գրքերի կարիք չի լինելու. նրանք պարտավոր են ասպիրանտուրայում տիրապետել մեկից ավելի օտար լեզուների (արդեն գիտենք, որ նախապես առանց օտար լեզվի քննություն հանձնելու ասպիրանտուրա դիմելու իրավունք էլ չունեն): Գիտությամբ զբաղվողների համար ուսուցման երեք աստիճանը (բակալավրատ, մագիստրատուրա, ասպիրանտուրա) լիովին բավարար են օտար լեզուներ յուրացնելու համար: Էլ չենք խոսում այն հնարավորությունների մասին, որ այսօր կան. պետական ու մասնավոր նախաձեռնություններով, զանազան հիմնադրամների միջոցներով այսօր բազմաթիվ հայ երիտասարդներ սովորում են նաեւ արտերկրում եվրոպական ու ամերիկյան բուհերում, այսօր շատ հայ գիտնականներ գիտական կապեր ունեն արտասահմանյան երկրների գիտնականների հետ:

Այս ամենը բավարար չէ՞ արդյոք մի փոքր երկրի գիտությունն ու մշակույթը զարգացնելու համար: Թե՞ դրա համար պարտադիր է հայ պատանուն (մի զգալի մասին) հեռացնել ազգային լեզվամտածողությունից՝ իր զարգացման ամենաբեղուն շրջանում:

Գաղտնիք չէ, որ հայ մարդը բազում փորձությունների միջով անցնելով՝ առ այսօր հարատեւել է առաջին հերթին իր լեզվի, իր գրի նկատմամբ ունեցած ջերմեռանդ վերաբերմունքի շնորհիվ: Հայ ծնողը իր զավակին պատգամել է՝ *«Խոսե՛ տղաս, խոսե՛ անվերջ մեր լեզուն, Այսպես պարզ ու երկյուղով սրբազան... Եվ մինչեւ իսկ շուրջդ ոչ ոք խոսի զայն...»*, պատգամել է՝ *«Հա՛յր, հայերեն սորվեցուր սա մանուկին հայկազուն»... Ո՜վ հայ... բերանացի, գրավոր, ու մտովին, հոգեւին՝ միշտ հայերեն խոսե դուն...»,* պատգամել է՝ *«թե մորդ անգամ մտքից հանես, քո մա՜յր լեզուն չմոռանաս...»:* Սրանք սրտից բխած իրական պատգամներ են, որոնք մեր բանաստեղծները ընդամենը չափածո են հնչեցրել: Եվ այս պատգամները միայն տարագիր ծագում չունեն. նրանց հասցեն միայն սփյուռքը չէ, դրանք համահայ տագնապի ծնունդ են: Երբ Շահան Շահնուրն հնչեցնում էր նահանջի տագնապի ահազանգը, այն միայն տարագիրների համար չէր, Չարենցը արձագանքեց նրան՝ հնչեցնելով իր «Պատգամը», որ այն օրերին՝ 1933-ին, միայն գաղտնագրել կարող էր՝ *«Ո՜վ հայ ժողովուրդ, քո միակ փրկությունը քո հավաքական ուժի մեջ է»:* Սա «Սովետական ազատ աշխարհ Հայաստանի՞» մարդկանց էր ուղղված, թե՞ Սփյուռքի տարագիր հայությանը: Սա համահայ տագնապ էր ու համահայ պատգամ: Այնուամենայնիվ, սովետական կայսրության պայմաններում՝ 1978-ին, ազգային լեզուների նկատմամբ ոտնձգության դեմ («Կոնստիտուցիայում» առաջարկվող փոփոխությունների) հայությունը կարողացավ ընդվզել եւ պահել հայերենով իր կյանքը շարունակելու իրավունքը: Իսկ այսօ՞ր: Անշուշտ պիտի հպարտանանք, որ Հայաստանի անկախ Հանրապետություն ունենք՝ իր սահմանադրությամբ, լեզվի օրենքով: Եվ սահմանադրությունը պաշտպանող պետություն, որ հայոց լեզվի առաջին պաշտպանողն է նույնպես: Պետական այրեր ունենք՝ հպարտացնող մեր անցյալ ու ներկա մշակույթի մեծերի ստեղծագործությամբ: Եվ այդ մեծերին պետականորեն մեծարող, նրանց հոբելյանները պատշաճորեն կազմակերպող այրեր: Այդպես կառավարությունն անցյալ տարի նշեց նաեւ մեր մեծերից մեկի՝ Դանիել Վարուժանի 125-ամյակը: Վարուժանի, որի խոսքը, ինչպես մեր բոլոր մեծերի՝ պատգամ է սերունդներին եւ, անշուշտ, նաեւ մեզ: 1912 թ., երբ եվրոպական համալսարան ավարտած Դանիել Վարուժանը հայրենիք էր վերադարձել եւ դասավանդում էր Թոքաթի (Եվդոկիա) Ազգային ճեմարանում, առիթ ունեցավ գրելու մի հոդված-պամֆլետ («Վերքը կ'արյունի») տեղի կաթոլիկների վարժարանի ղեկավարի դեմ: Այդ վարժարանում ուսուցումը տարվում էր ֆրանսերենով, եւ աշակերտների մեջ ատելություն էր սերմանվում մյուս հայերի նկատմամբ: Վարուժանը հոդվածը գրելիս հիմք ուներ ժողովրդի տրտունջը. «Ժեզվիթները հայ մանուկին մեջ հայությունը կը «մեռնեն»,- կը մռնչէ ժողովուրդը եւ կ'անցնի լռելյայն»: Վարուժանը լռելյայն չի անցնում: Հանգամանորեն քննում ու քննադատում է ճիզվիտների գործունեությունը, գտնելով, թե իրապես դրան «ուրիշ անուն պիտի տալ եւ ոչ թե ուսման եւ գիտության տարածում»: Վարուժանի մտածումները որպես պատգամ արդիական են նաեւ այսօր.

*«Արդեն իսկ իրենց հոգիին ամբողջականությունը պահող ազգեր պետք չունին կրթելու տղան այնպես, ինչպես մենք դեռ պարտական ենք ընել. անոնք ամենեն ավելի կը ձգտին մանուկին մեջ փրկել մարդը, իսկ մենք մարդը փրկելու համար պարտավոր ենք փրկել անոր մեջ վտանգված Հայությունը, քանի որ նախ եւ առաջ ատոր պետք ունինք: Լավագույն ազգերու ծոցեն պիտի ելլե լավագույն անհատը: Իր ազգին օգտակար եղողը անպատճառ կրնա օգտակար ըլլալ մարդկության...*

*.... ֆրանսերենի դեմ չեմ. ընդհակառակը կը փափաքիմ որ այդ միջազգայնացած լեզուն* (ավելացնենք՝ նաեւ անգլերենը, ռուսերենը Հեղ.) *շատ սորվեցվի մեր աշակերտներուն, քանի որ այդ լեզվին միջոցավ կարելի է այնքան գաղափարներու, վարդապետություններու եւ գեղագիտական վսեմ ներշնչումներու հետ ուղղակի հարաբերակցության մեջ մտնել, բայց երբ անկե գերադաս չափերով չի սորվեցվիր ազգային լեզուն, գրականությունն ու մատենագրությունը, այն ատեն առաջ կուգա այն հանգամանքը՝ զոր ցուցամոլությամբ եւ այլասիրությամբ կը մեկնվի: Ռուսիո մը կամ ուրիշ հզոր պետության մը համար իհարկե նվազ աղետաբեր կրնա ըլլալ* (ֆրանսամոլությունը 19-րդ դարում Ռուսաստանում մեծ չափերի էր հասել Հեղ.), *բայց մեզի համար, որ զանազան սպառնալիքներու տակ ինկած փոքր ազգ մըն ենք, որ պետք ունինք մեր բոլոր տոհմային հատկությունները կեդրոնացնելու եւ զարգացնելու, մեզի համար, կըսեմ՝ մեր լեզուն մաշի ծայրերով բռնելը խիթալի ոճիր մը կը համարվի»*:

«Մի ուրվական է շրջում» ամենուր: Չվախենանք՝ կոմունիզմի ուրվականը չէ, դա գլոբալիզացիայի (համաշխարհայնացման) ուրվականն է, որ ուզում է մարմնանալ: Ընդունենք, բայց չգրկախառնվենք:

**Վ. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ**
**ԵՊՀ հայ նորագույն գրականության ամբիոնի վարիչ, բ.գ.դ., պրոֆ.**
**Ա. ԱՎԱԳՅԱՆ**
**ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի դեկան, բ.գ.դ., պրոֆ**
**Ս. ՄՈՒՐԱԴՅԱՆ**
**ԵՊՀ հայ գրականության ամբիոնի վարիչ, բ.գ.դ., պրոֆ**

# Ահմադինեժադը դատապարտեց միջուկային տերությունների մենատիրությունը

Իրանի նախագահ **Մահմուդ Ահմադինեժադը** աշխարհի միջուկային տերություններին մեղադրել է ատոմային տեխնոլոգիաների մենատիրության ձգտելու մեջ: Նա մեղադրանքով հանդես է եկել ՄԱԿ-ի ԱԽ-ում հակաիրանական նոր բանաձեւի ընդունումից հետո, հաղորդում է Ֆրանսպրեսը:

«Միջուկային տերություններն ուրիշներին թույլ չեն տալիս ատոմային էներգիան օգտագործել նույնիսկ խաղաղ նպատակներով», հայտարարել է Ահմադինեժադը, միաժամանակ հիշեցնելով «որոշ տերությունների կողմից» ատոմային ռումբերի կիրառման փաստը: «Նրանք ուզում են գերտերության եւ տեխնոլոգիաների մենաշնորհը օգտագործել հանուն սեփական շահերի», ավելացրել է նախագահը:



Շատ երկրներ կասկածներ ունեն, թե Իրանի միջուկային ծրագիրն ուղղված է ատոմային զենքի ստեղծմանը: Թեհրանը պնդում է, որ ծրագիրը բացառապես խաղաղ բնույթ է կրում: 2010-ի փետրվարին Ահմադինեժադը հայտարարեց, որ Նաթանզում գտնվող ուրանի հարստացման գործարանը կարող է արտադրել 80 տոկոսանոց միջուկային վառելիք: Դա նշանակում է, որ երկիրը հնարավորություն ունի ուրանը հարստացնելու մինչեւ զենքի համար անհրաժեշտ աստիճան: Ապրիլին հայտնի դարձավ ուրանի հարստացման նոր ցենտրիֆուգների փորձարկման մասին:

Արեւմուտքը Իրանին առաջարկել էր ուրանն արտերկրում հարստացնել եւ հետ ստանալ միջուկային վառելիքի տեսքով, բայց Իրանը հրաժարվել էր` շարունակելով սեփական միջուկային ծրագիրը: Ավելի վաղ ՄԱԿ-ի ԱԽ-ն ձեռնարկել էր հակաիրանական տնտեսական մի շարք պատժամիջոցներ:

2010-ի հունիսի 9-ին ԱԽ-ում ընդունվեց նոր բանաձեւ` էլ ավելի խիստ պատժամիջոցներով, որոնք վերաբերում են Իրանի տնտեսությանը եւ ռազմարդյունաբերական համալիրին: Մասնավորապես Թեհրանին չի թույլատրվում արտերկրում ֆինանսավորել միջուկային ճյուղի ձեռնարկությունների գործունեությունը: Նաեւ ագելվում է մատակարարել Իրանին տանկեր, զրահամեքենաներ, ռազմօդանավեր, հարվածային ուղղաթիռներ, ռազմանավեր, հրթիռներ եւ հրթիռակայանքներ:

# Միջէթնիկական բախումներ եւ արտակարգ դրություն Ղրղզստանի հարավում



Ղրղզստանի հարավում` Օշի մարզում երեկ գիշեր տեղի ունեցած բախումների ընթացքում սպանվել են 17 եւ վիրավորվել առնվազն 200 անձինք: Հիվանդանոցներ տարված 109 վիրավորներից 43-ի վիճակը ծանր է: Այդ մասին հաղորդում է ԻՏԱՌ-ՏԱՍՍ գործակալությունը, վկայակոչելով հանրապետության առողջապահության նախարարության տվյալները: Իշխանությունները պնդում են, որ իրավիճակը փոքր-ինչ հանդարտվել է: Օշի մարզ են ուղարկվել զորքեր եւ զրահատեխնիկա:

Տուժածների մեծ մասն ունի հրազենային վերքեր, հաղորդում է Ինտերֆաքս գործակալությունը: Առողջապահության նախարարության մամլո քարտուղարի խոսքերով, տուժածների թիվը կարող է աճել:

Ամեն ինչ սկսվել էր հինգշաբթի ուշ երեկոյան Օշ քաղաքում, որտեղ ղրղզներից բացի ապրում են բազմաթիվ ուզբեկներ: Միջէթնիկական ծեծկռտուքը վերաճել էր զանգվածային անկարգությունների: Օշի կենտրոնում ամբոխը հավաքվել էր «Ալայ» հյուրանոցի մոտ: Անկարգությունների մասնակիցները սկսել էին հրկիզել ավտոմեքենաներ, ջարդուփշուր անել խանութներ եւ ինտերնետային ակումբներ:

Իշխանությունները արտակարգ դրություն եմ մտցրել Օշ, Ուզգեն քաղաքներում, ինչպես նաեւ հանրապետության Կարասուի, Արավանի եւ Ուզգենի շրջաններում: Արտակարգ դրությունը կգործի մինչեւ հունիսի 20-ը:

Օշի ուզբեկական մասում երեկ առավոտյան հայտնվել են հսկիչ անցակետեր: Ղրղզ եւ ուզբեկ երիտասարդների միջեւ մերթ ընդ մերթ տեղի են ունենում բախումներ: Քաղաքում հրկիզվել են մարզային ֆիլհարմոնիայի, Ուզբեկական դրամատիկական թատրոնի ՕՔՋԹ հեռուստաընկերության, «Ալայ» հյուրանոցի, տպարանի շենքերը, ինչպես նաեւ մի քանի սրճարան, խանութ եւ առեւտրի համալիր: ՌԻԱ գործակալության նախնական տվյալներով, հրկիզված հանրախանութների եւ սրճարանների տերերը ուզբեկներ են:

ՆԳՆ մամլո ծառայությունը հաղորդում է, որ անկարգություններ կազմակերպելու կասկածանքով Օշում 5 մարդ է ձերբակալվել:

**ԱՅՑԱԿՑՈՒՄ ԵՆ ԵՎ ՀՐԱՎԻՐՈՒՄ**

## ՆԱՏՕ-ի բաց դուռը` Վրաստանի համար

ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղար **Անդերս Ֆոգ Ռասմուսենը** հավաստել է դաշինք մտնելու Վրաստանի հեռանկարները` բարեփոխումների հաջող շարունակման պայմանով: Վրացական լրատվամիջոցների տեղեկացմամբ, Ռասմուսենը նշել է. «Մենք ձգտում ենք ավելի շատ օգնել Վրաստանին բարեփոխումների իրականացման գործում եւ հավաստում ենք, որ ՆԱՏՕ-ի դուռը Վրաստանի համար դեռեւս բաց է»: Այս հայտարարությունն արվել է Վրաստան-ՆԱՏՕ բրյուսելյան հանդիպմանը, որ մեկնարկել էր դեռեւս հունիսի 10-ին եւ ավարտվել է երեկ:

ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղարը հատուկ նշել է Աֆղանստանում միջազգային գործողություններին Վրաստանի ներդրման նշանակությունը, ընդգծելով, որ «այդ ներդրումը նշանակալի է, հատկապես ոչ մեծ երկրի կողմից»:

Ռասմուսենը Վրաստանին մատնանշել է քաղաքացիական հասարակության կողմից անվտանգության ուժերը վերահսկելու անհրաժեշտությունը: «Անհրաժեշտ է նաեւ շատ բարեփոխումներ անել: Դաշինքը կշարունակի աջակցել եւ ուղղորդել այդ բարեփոխումները, մասնավորապես պաշտպանության եւ անվտանգության ուժերի նկատմամբ քաղաքացիական ժողովրդավարական վերահսկողության ուղղությամբ»:

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

## Հաագայում 7 սերբեր դատապարտվեցին բոսնիացիների ցեղասպանության համար

Հաագայի դատարանը Բոսնիայի Սերբական Հանրապետության բանակի երկու նախկին սպաների ցմահ բանտարկության է դատապարտել` Սրեբրենիցայում 1995-ին բոսնիացի մահմեդականների ցեղասպանությանը մասնակցած լինելու համար: Այդ մասին հաղորդում է Ասոշիեյթեդ պրես գործակալությունը:

Նախկին Հարավսլավիայի հարցերով զբաղվող դատարանում նախկին սպաները ցեղասպանության համար դատապարտված առաջին անձինք են:

Գործակալության տվյալներով, հունիսի 10-ին մեղադրական վճիռ է կայացվել եւս 5 բոսնիացի սերբերի` բանակայինների եւ ոստիկանների նկատմամբ: Նրանք մեղավոր են ճանաչվել պատերազմական հանցագործությունների մեջ եւ դատապարտվել են 5-ից մինչեւ 35 տարվա բանտարկության:

Սրեբրենիցայում ավելի քան 7 հազար մահմեդականների սպանությանը մեղսակից 7 սերբերի դատավարությունը ամենամեծ դատական գործն է նախկին Հարավսլավիայի հարցերով զբաղվող ՄԱԿ-ի դատարանի գոյության ընթացքում: Երեք տարի տեւած լսումների ընթացքում հանդես են եկել 400-ից ավելի վկաներ:

Բոսնիացի սերբերի բանակի հրամանատարը գեներալ Ռատկո Մլադիչն էր: Միջազգային դատարանը եւ նախկին Հարավսլավիայի հարցերով զբաղվող տրիբունալը Սրեբրենիցայի 1995 թ. դեպքերը համարում են բոսնիացիների ցեղասպանություն: 2010-ի մարտի վերջերին Սերբիայի խորհրդարանը պաշտոնապես դատապարտեց Սրեբրենիցայի զանգվածային կոտորածները:

Գեներալ Մլադիչը մինչեւ օրս միջազգային հետախուզման մեջ է, իսկ Բոսնիայի Սերբական Հանրապետության նախագահ Ռադովան Կարաջիչի դատավարությունը սկսվել է 2009-ի նոյեմբերին:

## Ազնիվ ոստիկանապետը պահանջեց տուգանել իրեն

Ջորջիայի նահանգի Կոնիերս քաղաքի ոստիկանության բարեխիղճ եւ ազնիվ պետը` Ջին Ուիլսոնը, գործընկերներից պահանջել է իրեն տուգանել ավտոմեքենան սխալ տեղ կանգնեցնելու համար:

Officer.com կայքէջը հաղորդում է, որ ոստիկանության բարձրաստիճան պաշտոնյան արիաբար ընդունել է իր զանցանքի համար նախատեսված պատիժը եւ չի փորձել թաքնվել:

Ջին Ուիլսոնը պատմել է, որ ինքը նախաճաշելու համար ավտոմեքենան կանգնեցրել էր սրճարանի մոտ` ուշադրություն չդարձնելով մայթի վրայի նշագծմանը: Մինչդեռ վերջինս ցույց էր տալիս, որ այդ տեղը նախատեսված է հաշմանդամների համար:

«Ես խանութ մտա, որպեսզի ներսի սրճարանից սուրճ եւ բուլկի վերցնեմ: Հիանալի տրամադրության մեջ էի: Բայց երբ դուրս եկա, տեսա, որ իմ ոստիկանական մեքենան կանգնած է հաշմանդամների գոտում», պատմել է ոստիկանապետը:

Ջին Ուիլսոնը պարզաբանել է, որ շատ միջադեպից շփոթված` անմիջապես մեկնել է ոստիկանության բաժանմունք եւ ենթակա գործընկերներից պահանջել է իրեն պատժել օրենքի ողջ խստությամբ: Ոստիկանության մի կապիտան կարգազանց ոստիկանապետին 288 դոլար տուգանել է կայանման կանոնները խախտելու եւ հաշմանդամների իրավունքները ոտնահարելու համար: Բացի դրանից, Ուիլսոնը իր սխալը հրապարակավ զղջացել է, համապատասխան հրապարակում անելով տեղական թերթերում: Այդ մասին հաղորդում է CBS Atlanta.com կայքէջը:

Կոնիերսի բնակիչները գնահատում են իրենց ոստիկանապետի ազնվությունը: Իսկ Ուիլսոնը կատակով ասում է. «Հաշվի առնելով բուլկու եւ սուրճի արժեքը, նախաճաշը վրաս նստեց 292 դոլար: Բայց խիղճս հանգիստ է»:

# Թուրքիա-Իսրայել լարվածությունը գուցե հանգեցնի...

*1-ին էջից*

Հերշի այս խոսքերը ոչ այլ ինչ են, քան սպառնալու միջոցով Թուրքիային նախազգուշացում: Հատկանշական է, որ Նյու Յորքի «Թուրքական» կայքէջը հարկ է համարում հիմնավորել դրանք եւ ավելացնում է. «Իսրայելի Բար-լլան համալսարանի պրոֆեսորները եւ Վաշինգտոնի Ջորջթաունի համալսարանի հրեա դասախոս Օֆեր Իսրայելին նամակ են հղել Իսրայելի վարչապետ Բենիամին Նաթանյահուին եւ պահանջել, որ նա ճանաչի, այսպես կոչված, Հայոց ցեղասպանությունը: Հրեա գիտնականները վարչապետի ուշադրությունը հրավիրել են այն պայմանագրերի վրա, որոնք Թուրքիան ստորագրել է Իսրայելի ոչնչացման նպատակ հետապնդող երկրների հետ: Նամակում ասված է. «Հետեւաբար եկել է անկաշկանդ գործելու ժամանակը: Իսրայելի կառավարությունը հրապարակավ կարող է Հայաստանին աջակցել եւ ճանաչել Հայոց ցեղասպանությունը»: Գիտնականները միաժամանակ նշել են, որ Հայոց ցեղասպանության հարցում որդեգրած դիրքորոշումը չի ծառայում Իսրայելի շահերին, Իսրայելն այդ հարցում կարող է ընդունել «բարոյական» որոշում, թերեւս դրանով էլ ստիպել Թուրքիային ճանաչելու Հայոց ցեղասպանությունը»:

Ինչ վերաբերում է «Աքշամի» հոդվածագրին, ապա նա էլ անուղղակի հիմնավորում է Նյու Յորքի «Թուրքական» կայքէջին: Ահա թե ինչ է գրում. «9 հունիսի, 2010 թիվը Թուրքիայի պատմության տեսանկյունից շրջադարձային ամսաթիվ է, որովհետեւ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդում Իրանի դեմ նոր պատժամիջոցների կիրառմանը «դեմ» քվեարկելով, Արեւմուտքին հասկացրել ենք, որ մենք պատրաստ ենք «լողալ այլ ջրերում»: Ի՞նչ է հիմա սպասվում: Անմիջապես հիշեցնենք, որ ՄԱԿ-ի քվեարկությանը հաջորդող օրերին նախատեսված է ԱՄՆ Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատի Արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նիստ, որի օրակարգում «դեպի ո՞ւր է գնում Թուրքիան» հարցն է: Հանձնաժողովում ազդեցիկ դիրք ունեն հրեա կոնգրեսականները: Նրանք նախորդ տարիներին մեզ էին աջակցում, իսկ հիմա աջակցությունը մի կողմ, մեր դեմ ծավալում են լոբբիստական գործունեություն: Եթե որեւէ անակնկալ չպատահի, ապա նրանք, ելնելով «Թուրքիան հավակնում է գլխավորել չարիքի առանցքը» թեզից, ճնշում են գործադրելու, որ ամենակարճ ժամանակահատվածում Կոնգրեսի օրակարգում դրվի Հայոց ցեղասպանության բանաձեւը: Այդ առումով մեզ կարող է վշտացնել ԱՄՆ-ը, հատկապես Իսրայելի հետ առկա ճգնաժամի եւ դրան հաջորդող Իրանի հարցում ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի քվեարկության ֆոնին»:

Ելնելով թուրք-իսրայելական հակասություններից, Իսրայելում Հայոց ցեղասպանության ճանաչման հետեւություններ անող հայաստանցի որոշ քաղաքական գործիչները, քաղաքագետներն ու վերլուծաբանները առաջնորդվում են ցանկատեսությամբ: Հակառակ նրանց, ամերիկացի լրագրող Սեյմուր Հերշն ու թուրքական Աքշամի հեղինակ Նագեհան Ալչըն նույն հետեւության են հանգում, որ նախազգուշացնեն Թուրքիային:

Որքան էլ արդարությունը, ազնվությունն ու բարոյականությունը կատեգորիա չլինեն քաղաքականության մեջ, ցեղասպանությունը մարդկության դեմ կատարված հանցագործություն է: Ուստի ճանաչելու դեպքում հանցագործություն է առաջին հերթին դատապարտվում: Հետեւաբար ճանաչելով Հայոց ցեղասպանությունը, Իսրայելը դատապարտելու է մարդկության դեմ կատարված հանցագործությունը, իսկ դատապարտումը նախատեսված է ՄԱԿ-ի ցեղասպանության կոնվենցիայով: Ուստի չպետք է գերագնահատել Հայոց ցեղասպանության ճանաչման իրողությունը, ոչ էլ ճանաչումը վերագրել ճանաչող պետության արժանիքներին:

AZG NEW PDF.qxd 11/06/2010 20:37 Page 1



ՀԱՄԱՃԱՐԱԿ

# Ամեն մարդկայինի դեմ

Հանրապետության մետրոյի՝ Վերնիսաժ տանող աստիճանահայաց ձախ պատի գրությունը՝ «Գնահատման եւ թեստավորման կենտրոն՝ Գոհարի արյունը Ձեր գլխին է» (՞), ընդունելության քննությունների եւ առհասարակ մեր կրթական համակարգի վտանգավոր վիճակի մասին՝ անգամ այսպես կամայական եւ չպատճառաբանված, լուրջ անհանգստությունների առիթ է տալիս:

Թվում է՝ այլեւս անօգուտ, անիմաստ են դառնում ինչ-որ մտքեր, ինչ-որ գրություններ՝ ափսոսանքի, ցավի, բարոյականության ու խղճի մասին: Մարդու պայքարը մարդկայինի դեմ այնքան է ծավալվել, որ զավեշտի է վերածվել, եւ թվում է՝ ախտահարված մթնոլորտը ունակ չէ այլեւս ծնունդ տալու որեւէ առողջ, մտածող օրգանիզմի: Սնամեջ հասարակություն՝ վարակված անտարբերության մահաբեր բացիլով, համակերպված, պատանձված: Այնպիսի տպավորություն է, թե հանրային կյանք գոյություն չունի մեզանում, բոլորս (առանձին վայ-բացառություններով) հայտնվել ենք վիրտուալ տարածքում, երկիրը թողել անտերունչ, որ բզկտվում, քրքրվում է դրամաչափի տարածությունն ու ծավալը հայրենիք ու պատսպարում հռչակած մի քանի ընչաքաղցներից: Հողը գնալով կուչ է գալիս, նահանջում, դառնում ավելի ամայի՝ անպատասխան: Հոգնում է: Հոգնել է մեզանից:

Կողոպտված-բռնաբարված հանրային կյանքը ուժասպառ է, նա էլ է հոգնել: Հոգնել է ստից, անպատկառությունից, անօրենություններից, աճպարարությունից, տգիտությունից, խավարից, դրամապաշտության սանձարձակությունից, մարդատյացությունից: Հոգնել է: Եվ գուցե սահմանագծին ենք հասցրել մեր հոգնությունը: Իսկ ինչո՞ւ՝ գուցե. պատի այս գրությունը մի՞թե դրա վկայությունը չէ՞: Ահավասիկ ձեր եւ մեր՝ 16-17 տարեկան երեխաների՝ ընդունելության քննությունների՝ տասնամյակներ արդեն մեզ պատուհասած հանձնաժողովների հարստահարիչներին, թեստագիրներին ուղղված:



ՖՈՏՈԼՈՒՐ

«Ստուգեք մեր գիտելիքները գրականությունից, ոչ թե մեր ծնողների գրպանների պարունակությունը»: Սա նրանց դպրոցական տասնամյա փորձի բողոքի ճիչն է, որովհետեւ իրենք անմիջական մասնակիցն են եղել դպրոցական կյանքի, գնահատականի առուծախային տիրող խայտառակություններին:

Դպրոցական ավարտական էջը շատ ծնողների համար երանելի ազատագրում է՝ ցեցերի պես այս նույն միջավայրում բազմացող շատ ուսուցիչներից ու նրանց հաճկատար ծնողներից. այս վերջինները կամավոր-միջնորդ դրամահավաքչիներ են, տանող-բերողներ, շուկայական հոգեբանությամբ, որոնց ծառայությունները վարձատրվում են իրենց երեխաների արհեստական բարձրացվող միավորներով: Հետո, իհարկե, սրանք նույն հաջողությամբ բուհեր են սողոսկում, նույն տնավարի-շուկայական հարաբերությունները տեղափոխում բուհական միջավայր (օրինակներն այնքան շատ են, որ չարժե մանրամասնել): Իսկ մինչ այդ հասարակ չարչիների ու էլիտար քաղքենիների այս դասը աճպարարում է գրպանի պարունակությունը պարտել քաղաքում անուն հանած-համբավավոր պարապողների (հաճախ սնամեջ) առաջ: Իսկ մի մասն էլ անմիս-անիմաստ ճիգ ու ջանքերի, ինչպիսի զրկանքների գնով է դա անում: Եվ ահա... ողբերգությունը. դեռատի աղջկա ինքնասպանությունը: Թե որքանով են պատասխանատու վերոհիշյալ գրության հեղինակներն ու հասցեատերերը, շատ լուրջ քննարկելիք հարց է, բայց որ ընդունելության քննությունները հասարակական, սոցիալական լուրջ խնդրի են վերածվել ու հոգեբանական ծանր հետեւանքներ ու ազդեցություններ են ունենում գրեթե ամենքիս վրա, ակնհայտ իրողություն է: Սա համաճարակ է՝ պատուհասած մեզ:

Օտարալեզու դպրոցների վերաբացման դեմ ծավալված շարժումը գուցե ավելի լայն մասշտաբներ ընդգրկի՝ ուղղված համակրթական ախտավոր համակարգի՝ դպրոցական, բուհական, նաեւ ասպիրանտական ու գիտական աստիճանաշնորհման կառույցների դեմ: Գուցե հասարակական լայն շերտեր ընդգրկի եւ գուցե առողջացման նշաններ հայտնաբերվեն մեր մեջ: Չէ որ կրթությունը ամենաստրատեգիական համակարգն է, ուստիեւ՝ հասարակությունները քայքայելու առաջնային, հեռահար նշանակետն է դառնում: Սրա վկայությունն է պատին փակցրած գրության մյուս ահազանգը. *«Հայոց լեզվի քննությունները հայ երեխայի մեջ ատելություն են սերմանում հայոց լեզվի նկատմամբ: Ո՞րն է նպատակը»*: Նպատակն ավելի քան տեսանելի է: Հանրային բարոյազրկումը սկսվում է յուրաքանչյուր անհատի ինքնապականումից: Որեւէ անձ էթնիկ միավոր է՝ մշակութային, լեզվական առանձին պատկանելությամբ: Եվ սրա դեմ մարտահրավերը տանում է ոչ միայն ազգային, այլեւ համամարդկային այլասերման, որովհետեւ մայրենի լեզվի նկատմամբ ատելությունը ինքնատելություն է նշանակում, այսինքն՝ ինքնաոչնչացում:

ՄԵԼԱՆՅԱ ԲԱԴԱԼՅԱՆ

# «Խաղալու ենք» լուրջ ու մրցանակների ակնկալիքով

## Հայաստանը կներկայանա մասնակիցների ու կազմակերպիչների նույն քանակությամբ

**Դեռեւս մ.թ.ա. 582 թվականին Հին Հունաստանում հիմնադրված Դելփյան խաղերը, որ վերականգնվել են 20-րդ դարում, արդեն տասը տարի գոյություն ունեն որպես ԱՊՀ երկրների բաց երիտասարդական «Դելփյան խաղեր»: Դրանք այս տարի նվիրված են Հայրենական մեծ պատերազմի հաղթանակի 65-ամյակին եւ առաջին անգամ տեղի կունենան Հայաստանում՝ մասնակցությամբ նաեւ ոչ ԱՊՀ երկրների շնորհաշատ երիտասարդների, որոնք յուրաքանչյուր երկրում ընտրվել են հանրապետական մրցույթով: Հունիսի 26-ից հուլիսի 2-ը ԱՊՀ երկրներից եւ Վրաստանից, Հնդկաստանից, Լատվիայից ու Էստոնիայից ժամանած շուրջ 550 մասնակիցներն իրենց կարողությունները կներկայացնեն 17 մրցութային եւ 2 փառատոնային անվանակարգերում:**

Մասնակիցներն Հայաստանից 200-ն են, մարզերից մասնակցությունը կկազմի 20 տոկոս՝ ներառյալ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը: Տարիքային խմբերը երկուսն են՝ 10-15 եւ 16-21: Մրցութային եւ փառատոնային ծրագրերից զատ նախատեսված է նաեւ «Երկրների օրեր» ծրագիրը, որ ներկայացվելու է մարզերում, երկու գիտական կոնֆերանս: Աշխատանքային խումբը կկազմի 200 մարդ, իսկ մասնակիցների կարողությունները կգնահատի միջազգային ժյուրին՝ շնորհելով ոսկե, արծաթե եւ բրոնզե մեդալներ: Հայաստանի մասնակցությունը «Դելփյան խաղերին» նախորդած հինգ տարիների ընթացքում նշանավորվել է 13 ոսկե, 8 արծաթե եւ 12 բրոնզե մեդալներով:

Հայաստանում պատասխանատվությամբ են մոտենում ոչ միայն «Դելփյան խաղեր»-ին մասնակցությանը, այլեւ դրանց կազմակերպմանը, որում մասնակցություն է ունենալու նաեւ ՀՀ փոխվարչապետ Արմեն Գեւորգյանը, մշակույթի փոխնախարար Արթուր Պողոսյանը նաեւ «Դելփյան խաղեր»-ի կոմիտեն ու Հայֆիլհարմոնիան: Գեղարվեստական ղեկավարը ՀՀ ժողովրդական արտիստ **Բարսեղ Թումանյանն** է, որը վստահեցրեց. «Հայաստանից մասնակցում են իրենք արժանավորները եւ հույս ունենք մասնագիտական ժյուրիի բարձր գնահատականներին կարժանանան»:

«Չնայած ճգնաժամային տարում բարդ է այսչափ ծավալուն միջոցառում անցկացնելը, բայց՝ կարեւոր, քանի որ այն շահեկան է մեր երկիրը ներկայացնելու եւ տաղանդաշատ երեխաներին ու երիտասարդներին բացահայտելու տեսանկյունից: Մեր խնդիրը նրանց համար դրսեւորման լայն դաշտ բացելն է, միջազգային ասպարեզ դուրս բերելը ու եթե կնկատեք արժանիների՝ ուղարկեք մեզ մոտ», - հորդորեց մշակույթի նախարար **Հասմիկ Պողոսյանը,** որը նույնպես հաղթանակներ մաղթեց Հայաստանը ներկայացնողներին, ինչին միանում է նաեւ **«Ազգ»**-ը:

ՆԱՆԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ

# Էդուարդ Միլիտոնյան. «Հայաստանում փոքրից մեծ գիրք են գրում»

## Մրցանակներ մոսկովյան «Գրքարվեստ» մրցույթում

**- Պետական պատվերով տպագրության հանձնելու գրքերի հայտերը կրկնակի ավելի են եղած հնարավորություններից, քանի որ Հայաստանում փոքրից մեծ գիրք են գրում: Ամեն տարի հայտերը 5-6 հարյուրն են, իսկ պետպատվերով ու պետական միջոցներով հրատարակվող գրքերի քանակը՝ առավելագույնը 120-ը,- այսկերպ ներկայացնելով ոլորտում առկա իրավիճակը Էդուարդ Միլիտոնյանը հավաստեց, որ չափազանց դժվար է ընտրություն կատարել, բայց դժվարություններ չկան գրքի միջազգային ցուցահանդես-տոնավաճառներում ըստ արժանվույն ներկայանելու: Ասվածն էլ ամրապնդեց հունիսի 2-5-ը Մոսկվայում կայացած «Գրքարվեստ» մրցույթի արդյունքների հրապարակմամբ. «Արվեստի գիրք» անվանակարգում առաջին կարգի դիպլոմի է արժանացել «Տիգրան Մեծ» տպագրատան հրատարակած «Այվազովսկի» ալբոմը, որը կազմել է արվեստաբան Շահեն Խաչատրյանը, «Գիտություն եւ կյանք» անվանակարգում երկրորդ կարգի դիպլոմի՝ «Զանգակ-97» հրատարակչության «Հայ արվեստի պատմություն» գիրքը, որի հեղինակներն են Ա. Աղայանը, Հ. Հակոբյանը, Մ. Ասատրյանն ու Վ. Ղազարյանը: «Փրինթինֆո» եւ «Սարգիս Խաչենց» հրատարակչությունների լույս ընծայած «Կոմիտաս վարդապետ» գիրքն էլ երրորդ կարգի մրցանակի է արժանացել «Տպագրված է ԱՊՀ-ում» անվանակարգում: Մրցանակների հանձնումը տեղի է ունենալու Մոսկվայում սեպտեմբերի 3-ին կայանալիք գրքի միջազգային ցուցահանդեսում, որին Հայաստանը կներկայանա վերջին 2-3 տարում պետպատվերով եւ մասնավոր միջոցներով հրատարակված լավագույն գրքերով, իսկ ընտրանին կկազմվի ամենամյա հանրապետական «Գրքարվեստ» մրցույթի արդյունքների համաձայն: Էդուարդ Միլիտոնյանի հավաստմամբ Հայաստանը հաջող մասնակցության հնարավորություն ունի ոչ միայն մոսկովյան մրցույթին, որտեղ մրցանակների ակնկալիքով ներկայացել էր 11 երկիր, այլեւ եւս մի տասնյակ գրքի հեղինակավոր մի քանի մրցույթներում, որոնք ուղղակիորեն նպաստում են Հայաստանում գրահրատարակչության, գրքարվեստի թե՛ բովանդակային, թե՛ տեխնիկական կատարման որակական բարձրացմանը:**

Ն. Պ.

# Ազգային պատկերասրահի 26 հազար նմուշները թվայնացվել են

**Ազգային պատկերասրահը նոր շնչով է ապրում եւ տարեցտարի հետաքրքրությունը պատկերասրահում ցուցադրվող ցուցանմուշների նկատմամբ ավելանում է. այսպես ներկայացրեց իրավիճակը պատկերասրահի տնօրեն, գեղանկարիչ, պրոֆեսոր Փարավոն Միրզոյանը: Նա ուրախալի փաստ ու հաջողություն համարեց, որ այս տարի «Թանգարանային գիշեր» ծրագրի շրջանակներում շուրջ 7000 այցելու են ունեցել: Ազգային պատկերասրահի գործառույթներից հիմնական մշտական ցուցադրություններն են: Սակայն այս հարցում պրն Միրզոյանը մտահոգ էր, քանզի եղած ցուցասրահները չեն բավականացնում թանգարանի պահոցներում եղած արժեքավոր նյութերը ցուցադրվելու: Ստիպված կազմակերպում են ժամանակավոր ցուցահանդեսներ: «Այ, եթե Ազգային պատկերասրահի ողջ շենքը հատկացվի թանգարանին, լիուլի այդ հարցը կլուծվի: Իսկ այժմ այդ շենքում երեք այլ կազմակերպություն կա՝ «Հայաստանի պատմության թանգարան», «Ե. Չարենցի անվան գրականության թանգարան» եւ համերգային փոքր դահլիճ: Պատկերասրահի 26 հազար նմուշները այս տարի թվայնացրել ենք, համակարգիչում զետեղել: Սակայն արդեն 8 տարի է դիմել ենք, որպեսզի Ազգային պատկերասրահում ժամանակակից օդափոխության կենտրոնացված համակարգ տեղադրվի: Առ այսօր այդ հարցը չի լուծվում եւ շատ արժեքավոր գործեր ճաքճքվում են եղանակային ու ջերմաստիճանի համաչափությունը կարգավորող սարքերի բացակայության պատճառով», ասաց տնօրենը:**

**Չնայած դրան, պատկերասրահում ամեն ամիս կազմակերպվում են նոր ցուցադրություններ, հիմնականում հոբելյանական առիթներով: Նոյեմբեր ամսին նախատեսվում է իր նմանը չունեցող մի ցուցահանդես, նշեց պրն Միրզոյանը, որը նվիրելու է Վարդգես Սուրենյանցի 150-ամյակին: Կցուցադրվի Սուրենյանցի 140 գրաֆիկական եւ 100 գեղանկարչական աշխատանքները, կտպագրվի հոբելյանական ալբոմ եւ կկազմակերպվի հատուկ գիտաժողով: «Ես շատ կցանկանայի, որ նման ցուցահանդես կարողանայինք բացել նաեւ Մյունխեն քաղաքում (Գերմանիա), որտեղ ապրել է Սուրենյանցը, եւ կարծում եմ դա անհրաժեշտ է, որպեսզի աշխարհին ներկայացնենք մեր դասական նկարիչների գործերը»:**

**Սեպտեմբեր ամսին նախատեսվում է Մոսկվայի Պուշկինյան թանգարանում, երկրորդ անգամ ցուցադրել հայ եւ ռուս նկարիչների 120 կտավները: Օգոստոս ամսին՝ կբացվի Հարություն Կալենցի հոբելյանական անհատական ցուցահանդեսը: Աշնանը՝ Վաղարշակ Էլիբեկյանի ցուցահանդեսը: Արդեն մի շարք ցուցահանդեսներ բացվել են «Մեծ հայրենականի հաղթանակին», «Մեծ Եղեռնի 95-ամյա տարելիցին» եւ այլն: Արդեն մեկ ամիս է շարունակվում է իտալացի հայտնի գեղանկարիչ Ասիլմո Ֆրանչեսկոնիի 40 աշխատանքների ցուցադրությունը, որոնք Հայաստանի ազգային պատկերասրահին է նվիրել նկարչի այրին: Միջպետական պայմանագրի արդյունքում աշնանը պատկերասրահը Ճապոնիայի կառավարությունից կստանա ռեստավրացիոն սարքավորումներ, որոնք կհամալրեն՝ թանգարանի ֆոնդապահոցներում եղած աշխատանքների ռեստավրացիոն նյութերն ու տեխնիկան:**

**Ուրախալի մի փաստ էլ ներկայացրեց պրն Միրզոյանը. «Եղեգնաձորում վերաբացվելու է պատկերասրահի մասնաճյուղը հատուկ ցուցադրությամբ, որը նվիրվելու է ճարտարապետ Մոմիկի 750 ամյակին: Պատկերասրահը հանրապետության մարզերում ունի 11 մասնաճյուղ, որոնցից շատերի շենքային պայմանները խիստ կարիք ունեն վերանորոգման: Այսօր պատկերասրահի 280 աշխատակիցներից գրեթե կեսը երիտասարդ կադրեր եւ նրանց ջանքերի շնորհիվ նոր ուսումնասիրություններ են կատարվում ֆոնդերում եղած նյութերի տարեթվերի, հեղինակների, չափերի եւ այլնի շուրջը: Այս պահին մեկ ռեստավրատոր վերապատրաստվում է Վարշավայում, իսկ Մոսկվայից վերադարձել են երեք ռեստավրատորներ: Չնայած լուծված է թանգարանի անվտանգության ու հրշեջ ծառայությունների հարցը, սակայն օդափոխության կենտրոնացված համակարգ չլինելու պատճառով, նշեց տնօրենը, շատ ազգային արժեքներ կարող ենք կորցնել:**

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

AZG NEW PDF.qxd 14/06/2010 21:12 Page 1



# Ոչ-ոքի մեկնարկային խաղում

Երեկ Յոհանեսբուրգի «Սոկեր Սիթի» մարզադաշտում կայացած ՀԱՀ-Մեքսիկա հանդիպումով մեկնարկեց ֆուտբոլի աշխարհի 19-րդ առաջնությունը: Հանդիպմանը նախորդեցին բացման արարողությունը եւ նախօրեին կազմակերպված համերգային ճոխ ծրագիրը, որտեղ հանդես եկան մի շարք ճանաչված երգիչ-երգչուհիներ: Համերգի վերջում Շաքիրան կատարեց աշխարհի առաջնության պաշտոնական երգը՝ Waka Waka-ն:



Առաջնության բացման խաղին պետք է ներկա գտնվեր Նելսոն Մանդելան, սակայն նրա ընտանիքին բաժին ընկած դժբախտությունը հնարավոր չդարձրեց ՀԱՀ-ի նախկին նախագահի ներկայությունը: Այս առիթով Նելսոն Մանդելայի հիմնադրամի հատուկ հայտարարությունում հետեւյալն է նշված. «Տվյալ իրավիճակում տեղին չէր լինի Մանդելայի ներկայությունը բացման արարողությանը: Համոզված ենք, որ աշխարհի բոլոր մարդիկ այս պահին Մանդելայի եւ նրա ընտանիքի հետ են: Մենք կրկին այն կարծիքին ենք, որ աշխարհի առաջնությունը ոչ միայն ՀԱՀ-ի, այլեւ ողջ Աֆրիկայի համար պատմական կարեւոր իրադարձություն կլինի»:

Հարկ է նշել, որ աշխարհի առաջնությունների պատմության մեջ կազմակերպիչ երկրի հավաքականը մշտապես հաղթահարել է նախնական փուլի արգելքը: Ուստի բուքմեյքերները գրեթե հավասար էին գնահատել մրցակիցների հաղթելու հնարավորությունները: ՀԱՀ-ի հաղթանակը գնահատվել էր 2,73 գործակցով, Մեքսիկայինը՝ 2,60, ոչ-ոքին՝ 3,05: Նախկինում ՀԱՀ-ի եւ Մեքսիկայի հավաքականները 3 անգամ էին հանդիպել: 2 անգամ հաղթել էին մեքսիկացիները, մեկ անգամ հաջողությունն ուղեկցել էր հարավաֆրիկացիներին: Ի դեպ, վերջիններս մինչ առաջնության մեկնարկային հանդիպումը 12 խաղ անընդմեջ չէին պարտվել:

Թեեւ առաջին խաղակեսն անցավ մեքսիկացիների զգալի առավելությամբ, սակայն նրանք չիրացրին գոլային պահերը: Իսկ ահա ընդմիջումից հետո հարավաֆրիկացիները հասան հաջողության: Հակագրոհներից մեկի ժամանակ Սիֆիվե Տշաբալալան հեռահար հարվածով գնդակն ուղարկեց մեքսիկացիների դարպասի վերին անկյունը:

Դաշտի տերերը կարող էին եւս 2 գոլ խփել, սակայն չկարողացան իրացնել նպաստավոր պահերը: Խաղավերջում մեքսիկացիներին հաջողվեց վերականգնել հավասարակշռությունը եւ խուսափել պարտությունից: Գոլի հեղինակ դարձավ Ռաֆայել Մարկեսը: Այսպիսով, մեկնարկային խաղում գրանցվեց ոչ-ոքի:

# Գլխավոր խնդիրը եզրափակիչ մտնելն է

**Հունիսի 28-ից հուլիսի 3-ը Երեւանի «Միկա» մարզահամալիրում կանցկացվի բասկետբոլի Եվրոպայի առաջնության կանանց C խմբի մրցաշարը: Հայաստանի հավաքականն ընդգրկված է 1-ին ենթախմբում, որտեղ մրցելու է Մոլդովայի, Անդորրայի եւ Ջիբրալթարի բասկետբոլիստուհիների հետ: Մյուս ենթախմբում ընդգրկված են Շոտլանդիայի, Մալթայի եւ Ուելսի հավաքականները: Եզրափակիչ մտած 2 հավաքականներն իրավունք կստանան մասնակցելու Եվրոպայի B խմբի առաջնությանը:**




ՖՈՏՈԼՈՒՐ

**Առաջիկա մրցաշարի կազմակերպմանն ու անցկացմանն էր նվիրված երեկ սպորտի եւ երիտասարդության հարցերի նախարարությունում կայացած մամուլի ասուլիսը: Բասկետբոլի Հայաստանի ֆեդերացիայի նախագահ Հրաչյա Ռոստոմյանը տեղեկացրեց, որ նման մրցաշար առաջին անգամ է անցկացվելու մեր տարածաշրջանում: Եվրոպայի բասկետբոլի ֆեդերացիան հաշվի առնելով Հայաստանում կանանց բասկետբոլի նախկին լավ ավանդույթները, ինչպես նաեւ «Հասիսի» վերջին շրջանի հաջող մրցելույթները, մրցաշարի կազմակերպումը վստահել է Հայաստանին: Նա հույս հայտնեց, որ մրցաշարը Երեւանում պատշաճ մակարդակով կկազմակերպվի: Կազմակերպչական ընդհանուր ծախսը կկազմի 50-55 մլն դրամ: Ծախսերը հոգացել են բասկետբոլի եվրոպական ֆեդերացիան, ՀՀ կառավարությունն ի դեմս սպորտի եւ երիտասարդության հարցերի նախարարության, ՀԱՕԿ-ն ու հովանավորները: Մասնակից թիմերը կիջեւանեն «Շիրակում», մրցավարներն ու պաշտոնական հյուրերը՝ «Էրեբունի» հյուրանոցում:**

**Հրաչյա Ռոստոմյանը նաեւ նշեց, որ մրցաշարին պետք է մասնակցեր Ադրբեջանի հավաքականը, սակայն վերջինս հրաժարվեց Երեւան ժամանել: Հետաքրքրական է, որ Ադրբեջանի բասկետբոլի ֆեդերացիայի նախագահ Նասիբովը ծնվել է Երեւանում, վարժ հայերեն է խոսում եւ մինչեւ 1980-ական թվականները բնակվել է Հայաստանում:**

**Հայաստանի կանանց հավաքականի գլխավոր մարզիչ Գիա Ղազանչյանը չփորձեց առանձին-առանձին գնահատել մրցակիցների հնարավորությունները՝ նշելով միայն, որ պետք է ձգտել հաղթել յուրաքանչյուր խաղում եւ գրավել առաջին տեղը:**

**Հավաքականի մարզական տնօրեն Եղիշե Դավթյանը տեղեկացրեց, որ Հայաստանի ընտրանում իրավունք ունեն խաղալու միայն մեր երկրի քաղաքացիություն ունեցող բասկետբոլիստուհիները: Միակ լեգեոնականն Ամանդա Ջեքսոնն է, որը մարզասերներին հայտնի է «Հասիսում» ունեցած ելույթներից: Հրավիրվել են նաեւ արտերկրում հանդես եկող հայազգի բասկետբոլիստուհիներ Հասմիկ Մամիկոնյանը, Իրինա Գրիգորյանը, Քրիստինե Քեփենիկյանը, Արփինե Ամիրխանյանը: Զարուհի Ալեքսանյանը շուտով ծննդաբերելու է, իսկ Հռիփսիմե Ադամյանը վնասվածքի պատճառով չի կարող մասնակցել մրցաշարին:**

**Հայաստանի հավաքականն արդեն սկսել է նախապատրաստությունը: Մեր բասկետբոլիստուհիները նաեւ ստուգողական 3 հանդիպում են անցկացրել տղամարդկանց «Հասիս» եւ «Պոլիտեխնիկ» թիմերի հետ:**

# Քոուլն ու Բալակն այլեւս «Չելսիին» հարկավոր չեն

**Լոնդոնի «Չելսիի» ղեկավարությունը վճռել է չերկարաձգել Ջո Քոուլի եւ Միխայիլ Բալակի պայմանագրերը, որոնք ավարտվում են հունիսի վերջին: Այնպես որ հուլիսի 1-ից նրանք ազատ ֆուտբոլիստի կարգավիճակ կստանան:**

**Վերջին շրջանում երկուսին էլ հետապնդում էին վնասվածքները: Քոուլը, որ Անգլիայի հավաքականի կազմում կմասնակցի ֆուտբոլի աշխարհի առաջնությանը, «Չելսի» էր տեղափոխվել 2003-ին «Վեստ Հեմից»: Նրա տեղափոխման համար «Չելսին» 9,3 մլն եվրո էր վճարել: «Չելսիի» կազմում նա 282 խաղ է անցկացրել, խփել է 40 գնդակ: 28-ամյա ֆուտբոլիստը թիմի կազմում 3 անգամ նվաճել է Անգլիայի չեմպիոնի տիտղոսը, իսկ 2008-ին ճանաչվել է թիմի լավագույն ֆուտբոլիստ:**

**Ի տարբերություն Քոուլի, Բալակը չի մասնակցի աշխարհի առաջնությանը վնասվածքի պատճառով: Գերմանիայի հավաքականի ավագը վնասվածք էր ստացել մայիսի 15-ին «Պորտսմուտի» հետ կայացած Անգլիայի գավաթի եզրափակիչում: Հետաքրքրական է, որ Բալակին վնասվածք էր հասցրել Գերմանիայի հավաքականի ֆուտբոլիստ Ժերոմ Բոատենգի եղբայրը՝ Գանայի ընտրանու խաղացող Քեւին-Պրինսը:**

**Բալակը «Չելսի» էր տեղափոխվել «Բավարիայից» 2006-ին: Թիմի կազմում անցկացրած 168 խաղում 33-ամյա կիսապաշտպանը 25 գոլ է խփել: Վերջին գոլը նա խփել է իր համար չարաբաստիկ «Պորտսմուտի» հետ խաղում: Ի դեպ, Բալակը «Չելսիի» կազմում Անգլիայի եռակի գավաթակիր է:**

ЬЮ²Ь²ОафШ

## Գյուլբուդաղյանցը գլխավորեց «Իմպուլսը»

**Բարձրագույն խմբի առաջնության մասնակից թիմերում մարզչական 3-րդ փոփոխությունը տեղի ունեցավ: Վարուժան Սուքիասյանի փոխարեն «Իմպուլսի» ղեկը ստանձնել է «Բանանցի» նախկին գլխավոր մարզիչ Արմեն Գյուլբուդաղյանցը: Իսկ Սուքիասյանն ակումբում կշարունակի աշխատանքը փոխնախագահի իր պաշտոնում:**

## ՀՖՖ-ն 250 հազար դոլար կստանա

**Յոհանեսբուրգում ընթացող ՖԻՖԱ-ի համաժողովում, որին մասնակցում է նաեւ Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի պատվիրակությունը, հայտարարվել է, որ կազմակերպության անցյալ տարվա եկամուտն անցել է 1 մլրդ դոլարի սահմանագիծը (1 մլրդ 59 մլն դոլար): Այս պահին ՖԻՖԱ-ի բյուջեն 1,061 մլրդ դոլար է:**

**Եկամուտների այս աճը պայմանավորված է աշխարհի առաջնության հանդիպումների հեռուստաիրավունքի վաճառքով: Օրինակ, 1990-ին այն կազմել է 59 մլն եվրո, իսկ 2010-ին՝ 2,1 մլրդ եվրո: Իր եկամուտներից ՖԻՖԱ-ն բաժին կհանի ազգային մյուս ֆեդերացիաներին: ՖԻՖԱ-ի անդամ 208 ֆեդերացիաներից յուրաքանչյուրը 250 հազար դոլար կստանա: Բացի այդ, ՖԻՖԱ-ն 2,5 մլն դոլար կհատկացնի ֆուտբոլի 6 կոնֆեդերացիաներից յուրաքանչյուրին:**

## Կանանց արգելվում է մերկացնել կուրծքը

Աշխարհի առաջնության կազմկոմիտեն արգելել է կանանց տրիբունաներում մերկացնել կուրծքը: Վերջերս տեղի ունեցած ընկերական խաղի ժամանակ մի քանի կրքոտ երկրպագուհիներ ցուցադրել էին իրենց մարմնի բարեմասնությունները:



Նման արգելքի համար առիթ են տվել նաեւ առաջատար հեռուստաընկերությունները: Չէ՞ որ հանդիպումները դիտում են նաեւ անչափահասները: Իսկ որոշ երկրներում էլ կրոնական համոզմունքներից ելնելով տղամարդկանց արգելվում է հիանալ կանացի բարեմասնություններով:

## Մահացել է Նելսոն Մանդելայի ծոռնուհին

**Ֆուտբոլի աշխարհի առաջնության մեկնարկի ուրախությունը ՀԱՀ-ի նախկին նախագահ Նելսոն Մանդելայի համար խաթարվեց տեղի ունեցած ողբերգությամբ: Սովետոյում կայացած համերգից տուն վերադառնալիս ավտովթարի զոհ է դարձել Մանդելայի ծոռնուհին՝ 13-ամյա Զենանին: Հետաքննությամբ պարզվել է, որ ավտովթարի ենթարկված վարորդը հարբած է եղել: Նրան արդեն ձերբակալել եւ մեղադրանք են առաջադրել: Հերքվել է այն լուրը, թե իբր վթարի ենթարկված մեքենայում Զենանիի հետ եղել է նաեւ Մանդելայի նախկին կինը՝ Վիննի Մադիկիզելան:**

## Ռոնալդուի նվերը Մանդելային

**Պորտուգալիայի հավաքականի ավագ Քրիստիանու Ռոնալդուն եւ գլխավոր մարզիչ Կառլուշ Կեյրուշն ընդունելով Նելսոն Մանդելայի հրավերը, հանդիպել են նրան եւ 91 համարի մարզաշապիկ են նվիրել ՀԱՀ-ի նախկին նախագահին: Պորտուգալիայի հավաքականի մարզաշապիկին գրված է Մանդելայի ազգանունը, իսկ 91 համարը խորհրդանշում է վերջինիս տարիքը:**

## Մրցանակ գոլի յուրօրինակ նշման համար

**Հանրահայտ «Կոկա կոլա» ընկերությունը հատուկ մրցանակ է սահմանել այն ֆուտբոլիստի համար, որը բոլորից ինքնատիպ ձեւով կնշի խփած գոլը: Խփած գոլի առիթով ուրախության արտահայտման յուրօրինակ կադրերը կտեղադրվեն ՖԻՖԱ-ի ինտերնետային պաշտոնական կայքում Selebration Award խորագրի ներքո: Ֆուտբոլասերները հնարավորություն կունենան կայքում քվեարկելու իրենց դուր եկած տեսահոլովակի համար:**

**Լրացուցիչ խթան ստեղծելու նպատակով «Կոկա կոլան» պարտավորվել է «Ջուր դպրոցներին» ծրագրի իրականացման համար ստեղծված աֆրիկյան հիմնադրամին փոխանցել 1500 դոլար յուրաքանչյուր գոլի նշման դեպքում:**

## Կլիչկոն ու Պովետկինը պայմանավորվեցին

**Գերծանրքաշային բռնցքամարտիկներ Վլադիմիր Կլիչկոյի եւ Ալեքսանդր Պովետկինի երկար սպասված մենամարտը կկայանա սեպտեմբերի 11-ին: Այդ օրը Կլիչկոն կփորձի պաշտպանել IBF-ի վարկածով աշխարհի չեմպիոնի իր տիտղոսը: Առայժմ մենամարտի անցկացման ստույգ վայրը որոշված չէ: Այն կկայանա Ֆրանկֆուրտում կամ Մոսկվայում:**

**Պովետկինի մենեջերները ցանկանում են մենամարտն անցկացնել Մոսկվայի «Մեգասպորտում», իսկ Կլիչկոյի ներկայացուցիչները հակված են Ֆրանկֆուրտում հանդիպում կազմակերպել: Պովետկինը վաղուց էր սպասում Կլիչկոյի հետ մրցավեճին: Ճիշտ է, Էդի Չամբերսին հաղթելուց հետո նա առանձնապես ուժեղ մրցակիցների հետ չի մրցել:**

*Էջը պատրաստեց* ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

# Ծանուցում

Ձեւ N1

## ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԵԿՇԻՌ
**առ 01. 01. 2010 թ.**

| | | |
|---|---|---|
| | | ծածկագիրը |
| Կազմակերպության անվանումը | **«Ֆուրնիվուդ» ՍՊԸ** | 39206723 |
| Փաստացի գործունեության հիմնական երկու տեսակները | մանրամեծածախ առեւտուր արտադրություն | |
| Պետռեգիստրում գրանցման համարը | | 286.110.06238 |
| Հարկ վճարողի հաշվառման համարը | | 02583611 |
| Չափի միավորը | | հազ. դրամ |
| Գտնվելու վայրը | f. Երեւան, Եկմալյան 16 բն 2 | հեռ. 464083 |
| Փաստացի գործունեության իրականացման վայրը | f. Երեւան, Արարատյան 90 | հեռ. 464083 |

| ԱԿՏԻՎ | տող | Նախորդ տարվա վերջին | Հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) վերջին |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| I. Ոչ ընթացիկ ակտիվներ | | | |
| Հիմնական միջոցներ | 010 | 36368 | 60456 |
| Ոչ նյութական ակտիվներ | 030 | 188 | 114 |
| Հետաձգված հարկային ակտիվներ | 060 | 3692 | 1887 |
| Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ | 080 | 40248 | 62457 |
| II. Ընթացիկ ակտիվներ | | | |
| Նյութեր | 090 | 5375 | 3251 |
| Արտադրանf | 130 | 134 | 314 |
| Ապրանfներ | 140 | 1845845 | 2186795 |
| Տրված ընթացիկ կանխավճարներ | 150 | 494142 | 251100 |
| Դեբիտորական պարտfեր վաճառfների գծով | 160 | 14068 | 18438 |
| Կարճաժամկետ դեբիտորական պարտfեր բյուջեի գծով | 170 | 232865 | 163924 |
| Այլ դեբիտորական պարտfեր | 180 | - | 1810 |
| Դրամական միջոցներ եւ դրանց համարժեfներ | 200 | 43069 | 21515 |
| Ընդամենը ընթացիկ ակտիվներ | 220 | 2635498 | 2647147 |
| ՀԱՇՎԵԿՇԻՌ | 230 | 2675746 | 2709604 |

| ՊԱՍՍԻՎ | տող | Նախորդ տարվա վերջին | Հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) վերջին |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| III. Սեփական կապիտալ | | | |
| Կանոնադրական (բաժնեհավաf) կապիտալի զուտ գումար | 240 | 50 | 50 |
| Կուտակված շահույթ | 270 | 476437 | 35963 |
| Ընդամենը սեփական կապիտալ | 300 | 476487 | 36013 |
| IV. Ոչ ընթացիկ պարտավորություններ | | | |
| Երկարաժամկետ բանկային վարկեր եւ փոխառություններ | 310 | 570838 | 115 |
| Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ | 360 | 570838 | 115 |
| V. Ընթացիկ պարտավորություններ | | | |
| Կարճաժամկետ բանկային վարկեր | 370 | 963486 | 1133587 |
| Կարճաժամկետ փոխառություններ | 380 | - | 1061900 |
| Կրեդիտորական պարտfեր գնումների գծով | 390 | 542107 | 114757 |
| Ստացված ընթացիկ կանխավճարներ | 400 | 122314 | 89793 |
| Կարճաժամկետ կրեդիտորական պարտfեր բյուջեին | 410 | 14 | - |
| Կարճաժամկետ կրեդիտորական պարտfեր պարտադիր սոցիալական ապահովագրության գծով | 420 | 500 | - |
| Կրեդիտորական պարտfեր աշխատավարձի եւ աշխատակիցների այլ կարճաժամկետ հատուցումների գծով | 430 | - | 5833 |
| Կարճաժամկետ կրեդիտորական պարտfեր մասնակիցներին (հիմնադիրներին) | 440 | - | 267606 |
| Ընդամենը ընթացիկ պարտավորություններ | 490 | 1628421 | 2673476 |
| ՀԱՇՎԵԿՇԻՌ | 500 | 2675746 | 2709604 |

Լ. Կոխլիկյան

Մ. Պոնոմարևա (վկ. 0275)

Տնօրեն/Աուդիտոր
Վարդան Նիկողոսյան

Աուդիտոր
Նունե Ալեքսանյան

Ձեւ N2

## ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
**2009 թ. տարի**

| Ցուցանիշի անվանումը | տող | Նախորդ տարի (միջանկյալ ժամանակաշրջան՝ աճողական) | Հաշվետու տարի (միջանկյալ ժամանակաշրջան՝ աճողական) |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| Արտադրանfի, ապրանfների, աշխատանfների, ծառայությունների իրացումից հասույթ | 010 | 3463735 | 3328360 |
| Իրացված արտադրանfի, ապրանfների, աշխատանfների, ծառայությունների ինfնարժեf | 020 | (2683402) | (2696784) |
| Համախառն շահույթ (վնաս) | 030 | 780333 | 631576 |
| Իրացման ծախսեր | 040 | (150715) | (112872) |
| Վարչական ծախսեր | 050 | (92641) | (128193) |
| Արտադրանfի, ապրանfների, աշխատանfների, ծառայությունների իրացումից շահույթ (վնաս) | 060 | 536977 | 390511 |
| Գործառնական այլ եկամուտներ, այդ թվում | 070 | 117460 | - |
| Տարադրամի փոխանակումից | 071 | 117460 | - |
| Գործառնական այլ ծախսեր, այդ թվում | 080 | (41514) | (20311) |
| Տարադրամի փոխանակումից | 081 | 36490 | 14566 |
| Տույժեր, տուգանfներ, ակտեր | 082 | 5024 | 5745 |
| Գործառնական շահույթ (վնաս) | 090 | 612923 | 370200 |
| Ֆինանսական ծախսեր | 100 | (79541) | (167988) |
| Այլ ոչ գործառնական շահույթ (վնաս), այդ թվում | 130 | (122528) | (262089) |
| Արտարժույթի փոխարժ. տարբ. | 131 | (122528) | (262089) |
| Սովորական գործունեությունից շահույթ (վնաս) | 140 | 410854 | (59877) |
| Զուտ շահույթ (վնաս) նախքան շահութահարկի գծով ծախսի նվազեցումը | 160 | 410854 | (59877) |
| Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում) | 170 | 93272 | 44991 |
| Զուտ շահույթ (վնաս) շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո | 180 | 317582 | (104868) |

Լ. Կոխլիկյան

Մ. Պոնոմարևա (վկ. 0275)

Տնօրեն/Աուդիտոր
Վարդան Նիկողոսյան

Աուդիտոր
Նունե Ալեքսանյան

### Աուդիտորական եզրակացություն
### 2009 թ. դեկտեմբերի 31-ի ավարտվող տարվա համար
### «Ֆուրնիֆուդ» ՍՊԸ մասնակիցներին

Մեր կողմից իրականացվել է «Ֆուրնիվուդ» ՍՊԸ-ի 2009 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշվապահական հաշվեկշռի եւ նույն ամսաթվին ավարտվող տարվա ֆինանսական արդյունfների մասին հաշվետվությունների աուդիտ՝ աուդիտի ազգային ստանդարտներին համապատասխան: Աուդիտորական աշխատանfները ներառում են ֆինանսական հաշվետվություններում արտացոլված տվյալների եւ բացահայտումների հիմfերի հետազոտում, ֆինանսական հաշվետվությունների կազմանը կիրառված հաշվապահական հաշվառման սկզբունfների, կազմակերպության կողմից հաշվարկված հաշվապահական էական արժեfների, ինչպես նաեւ ֆինանսական հաշվետվությունների ներկայացման գնահատումը:

Ֆինանսական հաշվետվությունների կազմման համար պատասխանատվությունը կրում է կազմակերպության ղեկավարությունը: Աուդիտը չի բացահայտում կազմակերպության ներfին վերահսկողության բոլոր թերությունները, հետեւաբար նա չի արտացոլում նման բոլոր դեպfերը: Մեր պարտականությունն է անցկացված աուդիտի արդյունfում արտահայտել կարծիf ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ:

Մեր կողմից ընտրանfային կարգով աուդիտի է ենթարկվել կազմակերպության 2009 թ. գործունեությունը հաստատող այն սկզբնական փաստաթղթի հաշվեfննումն ու համապատասխան ձեւակերպումների ճշտությունը, որոնf հաստատում են ֆինանսական հաշվետվությունների տվյալները: Մենf գտնում ենf, որ մեր կողմից անցկացված աուդիտը բավարար հիմf է տալիս հետեւյալ եզրահանգման համար:

Կազմակերպության ֆինանսական հաշվետվություններում չկան էական խախտումներկ ֆինանսական հաշվետվությունները տալիս են «Ֆուրնիվուդ» ՍՊԸ-ի 2009 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշվապահական հաշվեկշռի եւ նույն ամսաթվին ավարտվող տարվա ֆինանսական արդյունfների մասին ճշմարիտ եւ իրական պատկերը եւ համապատասխանում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը:

«ԷՆ ԱՈՒԴԻՏ» ՍՊԸ
Աուդիտորական գործունեության լիցենզիա թիվ ԱՃ 007, 06.06.2002 թ.
375002, Երեւան, Թումանյան 40/28

Տնօրեն/Աուդիտոր
Վարդան Նիկողոսյան

Աուդիտոր
Նունե Ալեքսանյան

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ՄԱՍԻՆ

**«Պատմամշակութային արգելոց-թանգարանների եւ պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ը** (պատվիրատու) «ՊՄԱԹ ՊՄՊ ԳՀԱՊՁԲ-10/01» ծածկագրով հայտարարում է գնանշման հարցում՝ «Պատմամշակութային արգելոց-թանգարանների եւ պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի կարիfների համար համակարգչային տեխնիկայի եւ գույքի ձեռf բերման նպատակով: Հրավեր ստանալու համար անհրաժեշտ է 500 (հինգ հարյուր) ՀՀ դրամ փոխանցել «Հայէկոնոմբանկ»-ի «Պատմամշակութային արգելոց-թանգարանների եւ պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի N 163008140325 հաշվեհամարին եւ սույն հայտարարության հրապարակման օրվան հաջորդող 8 աշխատանfային օրվա ընթացfում դիմել պատվիրատուին հետեւյալ հասցեով՝ f. Երեւան, Թաիրովի 15, հեռ.՝ 58 74 25, Ա. Ավետիսյանին:

Հրավերն անձին տրվում է անձը հաստատող փաստաթղթի, իսկ կազմակերպության անունից հանդես գալու դեպfում՝ նաեւ անձի լիազորությունները հավաստող համապատասխան փաստաթղթի հիման վրա:

Հայտերը պետf է ներկայացնել մինչեւ դրանց բացման պահը՝ սույն հայտարարության հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 10-րդ աշխատանfային օրվա ժամը 12-ը:

www.
azg.am

*«Էկոնոմիկա եւ Իրավունf» ամսագիր*

Ինչպես անթերի վարել հաշվապահությունը եւ խուսափել հաշվապահական, հարկային եւ իրավաբանական սխալներից

♦ *Օրենսդրական նորություններ* ♦ *Պարզաբանումներ* ♦ *Խորհրդատվություն*

*«Էկոնոմիկա եւ Իրավունf» - ամսագիր ղեկավարների եւ մասնագետների համար*

**Բաժանորդագրվելու համար զանգահարեf 54-24-81, 54-74-81**

## ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՀՐԱՎԵՐ

«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ «Վերականգնվող էներգետիկայի վարկավորում» վարկային ծրագրի շրջանակներում «Փոfր ՀԷԿ-երի կառուցման նպատակով ծրագրերի տեխնիկական փորձաfննություն եւ շինարարության մոնիտորինգ» հանձնարարականն իրականացնելու համար հայտարարում է մրցույթ՝ խորհրդատվական կազմակերպության ընտրության նպատակով:

«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ-ն հրավիրում է համապատասխան խորհրդատվական կազմակերպություններին՝ ներկայացնելու իրենց հետաfրfրվածությունը վերոնշյալ ծառայությունների մատուցման առնչությամբ: Շահագրգիռ կազմակերպությունները պետf է ներկայացնեն տեղեկատվություն առ այն, որ վերջիններս ունեն համապատասխան որակավորում՝ նշված ծառայությունների մատուցման համար, այդ թվում՝ նման աշխատանfների կատարման փորձառություն՝ առնվազն վերջին 3 (երեf) տարիների ընթացում, ինչպես նաեւ աշխատակազմի համապատասխան որակավորում ու հմտություններ եւ այլն:

Շահագրգիռ կազմակերպությունները լրացուցիչ տեղեկատվություն կարող են ստանալ ստորեւ ներկայացված հեռախոսահամարներով, աշխատանfային օրերին ժամը 10:00-17:00:

Հետաfրfրության հայտերի ներկայացման վերջնաժամկետ է սահմանված 2010 թ. հունիսի 17-ը, ժ. 18:00:

Հայտերի թղթային տարբերակները կարող են ներկայացվել հետեւյալ հասցեով.

«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ
f. Երեւան 0015, Գr. Լուսավորիչ 9
Հեռ.՝ (374-10) 56-11-11
Ֆաfu.՝ (374-10) 51-31-33
Էլ. փոստ: **tenders@ameriabank.am** (էլեկտրոնային տարբերակները ուղարկելու համար)

*Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել՝*
*Աստղիկ Հակոբյանին (գնումների մասնագետ) եւ*
*Կարեն Հակոբջանյանին (Խոշոր ձեռնարկատիրության վարկավորման բաժնի ավագ մասնագետ)*

## Հայտարարություն

2010 թ. հունիսի 25-ից մինչեւ օգոստոսի 25-ը Աբովյան fաղաfի կրթահամալիրին կից գործող արեւային պոլիգոնում, Հայաստանի հելիոֆիկացիայի խորհրդի, Լոռու մարզպետարանի, Հայաստանի էներգախնայողության եւ վերականգնողական էներգետիկայի հիմնադրամի եւ «Ազգ» օրաթերթի նախաձեռնությամբ անց է կացվելու ճանաչողական միջոցառումների մի շարf

### «Փրկենf անտառները, կամ համով խորոված արեւով է լինում»

նշանաբանով:




Միջոցառումների նպատակն է հասարակայնության լայն զանգվածներին ծանոթացնել ժամանակակից արեւային տեխնիկային եւ տեխնոլոգիաներին, որոնf տեսանելի ապագայում մեծ նշանակություն են ունենալու մեր կյանfում:

Միջոցառման կազմակերպիչների համար առանձնակի հետաfրfրություն են ներկայացնում արեւային պիկնիկների, բացօթյա ճաշկերույթների, ծնունդների, ընտանեկան հանդիպումների կազմակերպումը, հատկապես երեխաների մասնակցությամբ: Փորձված մասնագետները եւ հմուտ խոհարարները Ձեզ կօգնեն պատրաստել համեղ արեւային ուտեստներ Ձեր հետ բերված սննդամթերfներով:

Արեւային պոլիգոն այցելելու Ձեր մտադրության մասին պետf է նախօրոք տեղեկացնել **56-44-69** եւ **093-35-95-53** հեռախոսահամարներով:

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 17.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 11.06.2010, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Նոյեան Տապան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: